


2008

---



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Հատուցման հանգրուանին սեմին

Յետադարձ ակնարկով երբ նայինք Հայ Դատի պատմական հողովոյթին եւ ժամանակագրական դէպքերուն, յստակ կը դառնայ այն իրողութիւնը, որ ի գին Օսմանեան կայսրութեան մնացորդաց Թուրքիոյ գոյատեման՝ 1915-ին գործադրութեան դրուեցաւ Հայաստանը իրեւ դարձաւոր բնօրբան դաւանած ցեղի մը բնաջնջման ծրագիրն ու անոր պատկանող հողային տարածքներու բռնագրաւումը:

Այսօր, հողի կորուստէն եւ ցեղի ստուար մէկ զանգուածի լիակատար ոչնչացումէն 93 տարի ետք, Թուրքիոյ այսօրուան իշխանութիւնները, կը շարունակեն պատմական ծմբառութիւնը ուրանալ եւ աւելին, վերջին տարիներու իրենց շղթայագերծած հակահայքարողաշաւով կը փորձեն պատմութիւնը խեղաթիւրել եւ զոհի ու յանցագործի գերերը շրջել:

Քաղաքական գետնի վրայ, անցնող տարեշրջանին, Անգարայի բարձրաստիճան պաշտօնատարներու չղագար երթեւեկը Ուաշինգթոնի եւ Պրիւքսէլի միջեւ, փաստ է այն երեւոյթին, որ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցը կը գտնուի բարեյաջող ելքի իր վերջին արարին մէջ: Թրքական կողմը այս ճակատին վրայ պարզապէս կը փորձէ ժամանակ վաստկիլ եւ ձեւաւորել յստակ ուազմավարութիւնը մը, զիմակայելու իր յաջորդ եւ վճռական մարտահրաւէրը՝ հայկական կողմին հատուցումներ կատարելու խնդիրը:

Այս ծիրէն ներս, հատուցման գծով որեւէ գործնթաց կանխելու միտումով, Անգարայի իշխանութիւնները ուրացման իրենց մարտավարութիւնը առաւելաբար կերպոնացուցած են երկու ուղղութիւններու վրայ.

Ա.- Ակադեմական մակարդակի վրայ հայկական կողմը ներքաշել «1915-ի դէպքերուն վրայ լոյս սփոռող» երկողմանի պատմագիտական խորհրդաժողովներու թակարգին մէջ:

Բ.- Հարցին նոր իրաւական բովանդակութիւն ներարկելով, զայն փոխադրել միջազգային իրաւական ատեաններու քննարկման սեղան:

Անշուշտ թրքական կողմի պատմութիւնը խեղաթիւրելու նենգամիտ ձաբուտուքները յաճախ կը ստանի իրենց արժանի հակահարուածները, սակայն ներկայ դրութեամբ, անհրաժեշտ է հատուցման գերխնդրին շուրջ կեղունացնել Հայ Դատի առնչութեամբ յառաջիկայ աշխատանքները:

Առաջին հերթին սակայն, այս հարցը արծարծելու ընդհանուր պարունակէն ներս, պէտք է ամենչն մօտ ապագային, պահանջատիրութեան վերջին օդակը կազմող հատուցման հարցի ուազմավարութիւնը ճշգել ու իր հայութեան ազգային անվտանգութեան հետ կապուած առաջնահերթութիւն՝ անոր թղթածրարը կեանքի կոչել:

Հայութեան դէմ գործադրուած անարդարութիւնը վերականգնելու ուղղութեամբ, պետական մակարդակով յանցագործութիւն իրագործած Օսմանեան Թուրքիոյ իրաւայաջորդները, բարոյական հատուցման պարտաւորութիւններու կողքին, ունին նաեւ բռնագրաւուած հողային տարածքները հայութեան վերագարձնելու պարտաւորութիւնը:

Հատուցման հանգրուանը սկսած է. պատրաստը լլանք այս վերջին առճակատման եւ մարտահրաւէրին: «ՀՈՐԻԶՈՆ»

#### Բովանդակութիւն - Contents - Sommaire

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԸ, ԷԿ 2 - Խաչիկ Տէր Ղուկասեան

On the Poverty of Debates on Mass Violence in Turkey, page 29  
By Ugur Umit Ungor

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԱՆՈՐ ՇՈՒԻՇ, Էջ 5 - Յակոր Պալեան

What About the Law of Natural Justice?, page 32

By Vartkes S. Dolabjian

ՄԱԼԹԱՅԻ ՓԱՍՏԱԹՈՂԹԵՐԸ, Էջ 6 - Արայ Կարմիրեան  
ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՅՈՒՄԸ ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ, Էջ 15 - Թուրքէն Մելքոնիսան

Canada's Moral Mandate for Armenia: Sparking Humanitarian and Political Interest, 1880-1923, page 34

By Aram Adjemian

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԻՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՍՄԱՆԵՐԸ ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ, Էջ 17 - Արա Պապեան

Near East Relief and the Armenian Genocide, page 39

ԱԱՐԵԳԱՆՔ ՈՒ ԱԼԻՄԻ ԱՎՐՈՒՆՔ, Էջ 19 - Վրեժ-Արմեն

«Les faits les plus horribles de l'histoire», page 40

Henri Morgenthau

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒ ԱռԵւանդումն ու իւլամացումը, Էջ 20

Le génocide arménien dans les Archives allemandes, page 44

ԵՂԵԿՈՆ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆ ԷՐ, Էջ 24 - Վաչէ Բրուտեան

Saturnalia of slaughter by refined methods as Young Turks set out to wipe armenian race off the world, page 45

Ottawa Evenong News

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆ՝ ՊԱՀԱԽԶԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՍԱՀՄԱՆՈՒՄ


**Հողային պահանջատիրութիւնը միշտ ալ սերտօրէն առնչակից եղած է Ցեղասպանութեան արդարահատոյցի հարցին:** Ոճիրի պատասխանատուութեան ճանաչումը ցեղասպան պետութեան կողմէ հայ քաղաքական մտածողութիւնը բանաձեւած է որպէս առաջին քայլը որուն պիտի յաջորդէ Արեւմտահայաստանի վերագրածը իր օրինական տիրոջ՝ հայ ժողովուրդին: Արդարահատոյցի նման բանաձեւումը ծնունդ առած է գեռեւս 1919-ին, երբ առաջին անգամ ըլլալով՝ Հայաստանի առաջին անկախ Հանրապետութեան մէջ Արեւմտահայոց Խորհուրդը, որ նոյնիսկ իր ներկայացուցիչները ունէր Խորհրդարանին մէջ, նշած է Եղեռնը եւ պահանջած պատասխանատուներու դատավարութիւնն ու վերապաներու տունդարձը: Հայ պետականութեան պատասխանատուները օրին իրենց ըրած են այդ պահանջատիրութիւնը, որ, ինչպէս ծանօթ է, յանգեցաւ Սեւրի Դաշնադրի ստորագրութեան՝ 1920-ին: Սեւրի իրագործումը, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծումը, վստահաբար լուծում բերած պիտի ըլլար Ցեղասպանութեան արդարահատոյցի առնուազն նիւթա-առարկայական երեսին: Նաեւ երկու ազգակներ օրին Արեւմտահայաստանի պահանջատիրութեան բանաձեւման իրապաշտութեան եւ իրականացման վստահութիւն կը ներշնչին: Անոնցմէ առաջինը՝ Հողային պահանջատիրութեան տէր կանգնող անկախ պետականութեան մը առկայութիւնն էր, իսկ երկրորդը՝ Ցեղասպանութեան վերապաներու իրենց տուները վերագանձու սպասումն էր: Հայաստանի խորհրդայնացումն ու Արեւմտահայութեան Սփիւրքացումը յանգեցան այս զոյդ ազգակներու չքացման:

Այդուհանդերձ, Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը ինքնին չվերացաւ: Սփիւրքի իրերայաջորդ երեք սերունդները երբեք հարցականի տակ չդրին այդ հողերու հայապատկանութիւնը, ոչ ալ հրաժարեցան անոնց վերագրածի յոյսէն: Ճանաչում-հատուցում տրամաբանութիւնը պարզապէս հոմանիշ էր արդարութեան, եւ որպէս այդպիսին չէր կրնար կասկածի տակ առնուիլ: Հետեւաբար, անիրապաշտութիւն չէր այդ օրերուն հարց տալ թէ ինչպէս տեղի պիտի ունենայ հողային վերագրածը, ինչպէս պիտի կազմակերպուի վերաբնակեցումը, ո՞վ պիտի վերագանձայ: Հարցումները պարզապէս իմաստ չունէին երբ խնդիրը հիմնականօրէն արդարութեան կը վերաբերէ: Սիալ է նաեւ ենթագրել, որ հողային պահանջատիրութիւնը պարզապէս միջոց էր հայապահպանումին: Միջին Արեւելեան հայ համայնքները իրենց կերպոնական կարեւութիւնը ունէին ոչ միայն որովհետեւ այդ երկիրներուն մէջ հայապահպանման գործի պայմանները ամենչն նպաստաւրներն էին: Աշխարհացրիւ հայութիւնը Միջին Արեւելքի մէջ համախումք պահելու նախանձախնդրութիւնը ունէր ուազմավարական իմաստ՝ հայրենադարձութեան հեռանկարով: Աւելի՛ն, 1970ական թուականներուն, երբ Հայ Դատի պայքարը աննախընթաց թափ առաւ, Հող եւ Մշակոյթ կազմակերպութիւնը գործնական ամբողջ ծրագիր մը յղացաւ՝ Արեւմտահայաստան վերագրածի հետանկարով:

Կարեւոր է ընդգծել, որ Արեւմտահայաստանի պահանջատիրութիւը իրայատուկ չէր միայն Սփիւրքին՝ որպէս ժառանգորդը Արեւմտահայութեան: Հակառակ խորհրդային կարգերուն եւ առնուազն ստալինեան բռնատիրութեան տարիներուն յանուն թուագ-խորհրդային բարեկամութեան Ցեղասպանութեան յիշողութեան արգիլման, Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը որպէս արդարութիւն ամբագրուած էր ազգային գիտակցութեան մէջ: Այլապէս անկարելի է բացատրել Մեծ Եղեռնի յիսունամեակին առիթով երեւանի փողոցները ողողած հայորդիներուն միահամուռ «Մեր հողերը, մեր հողերը» պոռթկումը: Տակաւին, 1965-ին յաջորդած խորհրդային պայմաններուն մէջ ազգային այն յատուկ աշխուժութիւնը որ նկատելի էր 1970-ական թուականներուն յատկապէս հայրենի մտաւորականութեան մօտ, որ մասնաւոր ուշագրութիւն կը գարձնէր Արեւմտահայաստանին, ինչպէս կը վկայեն առնուազն Ցեղասպանութեան մասին գրուած պատմական ուսումնասիրութիւնները: Խորհրդային Հայաստանի պարագային այս արդարութիւն մէջ ազգային այն յատուկ աշխատավայր իրապաշտութեան կամ անիրապաշտութեան: Ճիշդ է, հայրենի ղեկավարներու ինքնավարութիւնը իրավունք իրավագութիւններու իշխատ պայմանաւորուած էր թուրք-խորհրդային յարաբերութիւններու զարգացումով: Սակայն այդ մէկը արգելք չէր հանդիսանար որ գոնէ ազգային ոլորտին մէջ հարցը կենդանի մնար:

Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը, ուրեմն, համագգային մասշտապով հիմնականին մէջ կը բանաձեւուէր որպէս արդարութեան հարց եւ ունէր էապէս արդարահատոյցի իմաստ: Խորհրդային կարգերը, Մոսկուայի եւ երեւանի յարաբերութիւնները որոնք այնքան ալ տարբեր չէին կայլութեան մը յատուկ կեդրոն-ծայրամաս յարաբերութիւններու բնոյթէն, շատ հաւանաբար իշխատ սահմանափակումներ հաստատած էին թէկուզ եւ խորհրդային արտաքին լծակի օգտագործման միջոցաւ այս հարցի ինչ որ ձեւի արձարձման որպէս գործնական միջոցաւում: Բայց գաղափարը օրին կ'արտացոլացնէր եւ հայրենի հայութեան, եւ սփիւրքահայութեան իդձը եւ որպէս այդպիսին ազգային միասնականութեան ազդակ էր: Եւ իրօք, այդ միասնականութիւնը ամբողջականօրէն դրսեւուեցաւ զարգացման առաջին ժամանակներուն, երբ կարծես, առանց իսկ մշակուած ծրագիր ունենալու, համայն հայութիւնը գիտէ՛ր թէ դէպի ո՞ւր կ'առաջնորդէր իր պատմական հոլովոյթը: Այդ օրերուն Ազգային գաղափարախօսութիւնը կասկածի տակ չէր գրուեր, եւ Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը որպէս Ցեղասպանութեան արդարահատոյց մաս կը կազմէր Ազգային գաղափարախօսութեան:

Կարելի է անկախ պետականութեան վերականգնումը դիտել որպէս ցարդ իրական թուացած բայց խորքին մէջ ցնորային տեսիլքի մը անհետացումը, իրապաշտութեան կոչտ հրաւէր մը, ինքնասթափումի պահ մը: Այդ կեցուածքը որգեգրեց Հայաստանի առաջին նախագահ Լեռն Տէր Պետրոսեանն ու, ընդհանրապէս, օրին իշխանու-



թեան գլուխ գտնուող Հայոց Համազգային Շարժումը, որոնք անկախութեան հռչակագրին յաջորդող տարիներուն առաջնահերթ համարեցին թուրքիոյ հետ բարիզրացիական յարաբերութիւնները եւ ոչ թէ Եղեղասպանութեան ճանաչումն ու արդարահաստոյցը: Այլ խօսքով, բանաձեւեցաւ եւ գործի դրուեցաւ քաղաքականութիւնն մը, որ խորքին մէջ Արեւմտահայաստանը գուրս կը բերէր հայ քաղաքական մտածողութեան դաշտէն: Հստ այդ քաղաքականութեան ետին գտնուող եւ ինքինք «պետական» պիտակող մտածողութեան, անհրաժեշտ էր ե'ւ իրապաշտութիւն, ե'ւ գործնականութիւն, որոնք կը թելադրեն պարզ եւ մէկեկին՝ Եղեղասպանութեան հարցն ու իր ենթադրած բոլոր հետեւանքները պարզապէս գուրս բերել պետական քաղաքականութեան օրակարգէն: Ինչ որ, փաստօրէն, յաջողեցան ի գին ներազգային պառակտման, ընել առնուազն մինչեւ 1998:

Կասկած չկայ որ Հայաստանի անկախացումը համայն հայութեան համար ազգային նոր իրավիճակ մը կը ստեղծէր եւ անհրաժեշտ էր վերատեսութեան ենթարկել շատ մը օրակարգեր՝ ներառեալ Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը։ Ոչ իսկ հարցականի տակ կը դրուին նորանկախ պետութեան օրուան առաջնահերթութիւնները՝ արցախեան պատերազմէն մինչև ընկերա-տնտեսական կացութեան հիմնախնդիրները։ Եւ, փաստօրէն, հազիւթէ այդ օրերուն գտնուէր քաղաքական որեւէ ոյժ, որ պնդէր Արեւմտահայաստանի պահանջատիրութեան վրայ որպէս արտաքին օրակարգի գլխաւոր խնդիր։ Անհրաժեշտ է, սակայն, քննադատական ակնարկով մը վերադառնալ օրին պետական քաղաքականութեան վերածուած բանաձեւումներուն, որոնք պարզապէս ազգը կը հրաւիրէին հաշտուիլ պատմական իրողութեան հետ եւ Արեւմտահայաստանը ճանչնալ որպէս Արեւելեան Անատոլու։ Անկախ պետականութեան առաջին կառավարութեան փորձառութիւնը եկաւ ցոյց տալու, որ մինչ նման մօտեցում, որուն մեկնակէտով սեղանի վրայ գրուեցան կարգ մը «գործնական» ծրագիրներ, ինչպէս՝ Հայաստանի ազատ ելք դէպի Սեւ Ծով՝ Տրապիզոնի նաւահանգիստէն, ոչ մէկ արդիւնքի

յանդեցաւ հայ-թրքական յարաբերութիւններու հաստատման նպատակով, այլ՝ ներազգային խոր պառակտման առիթ եղաւ։ Յոռեգոյնը այն եղաւ, որ՝ Արեւմտահայաստանի պահանջատիրութիւնը տեղի տուաւ հայ քաղաքական մտածողութեան մէջ, Ֆեղասպանութիւնը, առնուազն պետական քաղաքականութեան օրակարգին վրայ, վերածւեցաւ պատմանաբաններու խնդիր, եւ, թէկուզ եւ փոքրամասնական հատուածի մը մօտ, արմատաւորուեցաւ, կամ՝ «արմատաւորուեցաւ», եթէ նկատի ունենանք այս ուղղութեամբ ՀՀՇի գաղափարախօսութեան ամենահաւատարիմ ուսումնասիրական վերլուծական Արմատ կեդրոնի դերը՝ Արեւմտահայաստանը որպէս Անատոլու ընդուներու համոզումը։

1998-ի իշխանակիութիւնը եկաւ ցոյց տալու որ կարելի էր արտաքին քաղաքականութեան վրայ բանաձեւել Ցեղասպանութեան ճանաչման հարցը, առանց որ այդ մէկը Թուրքիոյ դէմ պատերազմի յայտարարութիւնը ըլլայ: Աւելի՞ն, անցնող տասը տարիներուն ընթացքին հայ-թրքական յարաբերութիւնները շարունակուեցան ճիշդ այնպէս ինչպէս ուղղակի կամ անուղղակիօրէն առաջ կը տարուէին Լեւոն Տէր Պետրոսեանի իշխանութեան օրերուն: Անգարայի անզիջողական կեցուածքը եւ յարաբերութիւններու բնականոնացման պայմանաւորումները ոչինչով տեղի տուին: Խոպերթ Քոչարեան, իր կարգին, բնաւ խնդիր չունեցաւ Ցեղասպանութեան հարցին մասին խօսելու ՄԱԿ-ի քեմէն, թէ իսթանպուլի մէջ իր թուրք գործընկերոջ հետ: Տակաւի՞ն, թէկուզ զուգագիպութիւն համարուի, իրողութիւնը այն է որ Ցեղասպանութեան հարցը թրքական հասարակութեան եւ մտաւորական շրջանակներու մէջ քննարկման ու հանրային բանավէճի նիւթ գառնալու սկսաւ անցնող տասը տարիներուն, երբ Հայաստանի քաղաքական օրակարգին վրայ էր Ցեղասպանութեան հարցը: Հայ-թրքական յարաբերութիւններու բնականոնացումը պարզապէս չէ պայմանաւորուած միակողմանի զիջումներով, ոչ ալ անհրաժեշտ է հետեւողականօրէն ճիգ ընել խաղաղութեան յանձնառութեան:

Ցեղասպանութեան հարցը Հայաստանի պետական քաղաքականութեան օրակարգին հաստատագրուելէն



տասը տարի ետք անհրաժեշտ է վերադառնալ Արեւմտահայաստանի խնդրին եւ վերասահմանել հողային պահանջամատիրութիւնը: Ճիշդ է, իրավաշտ չէ հողային պահանջամատիրութիւնը գնել արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ: Սակայն, թերեւս ժամանակը եկած է Յեղասպանութեան արդարահատոյցի ուղղութեամբ Սփիւռք-Հայաստան համակարգուած ազգային ռազմավարութեան մը մասին մտածելու: Ճանաչում-հատուցում/հողերու վերադարձ բանաձեւումը պատմական այլ ժամանակի յատուկ է: Բայց մեկնակէտը չի կրնար ըլլալ Արեւմտահայաստանէն հրաժարում, եւ Յեղասպանութեան խնդիրը միայն ճանաչման բարոյական ոլորտին մէջ սահմանել: Մէկ կողմէ կան նախանշաններ, որ առանց պահանջատիրութեանէն հրաժարելու կարելի է մտածել աւելի ճկուն բանաձեւումներու մասին, միւս կողմէ՝ Յեղասպանութեան եւ արդարահատոյցի ամբողջ օրակարգ մը կայ, որ տակաւին անհրաժեշտ է կատարելագործել:

Ինչ կը վերաբերի նախանշաններուն, ապա եւ անոնք սերտօքին կապուած են Յեղասպանութեան միջազգային ճանաչման գուգահեռ կանխատեսելի թէ ինքնարուխ զարգացումներու: Անոնց կարգին՝ Արեւմտեան ապահովագրական ընկերութիւններու դէմ սկսած դատական գործընթացները, տարբեր երկիրներու մէջ առկայ յիշողութեան եւ ճշմարտութեան իրաւունքի հիման վրայ սկսած օրինական պահանջները, թուրքիոյ մէջ բռնի իսլամացած հայերու զարթօնքը, Արեւմտահայաստանի թէ Կիլիկիոյ մէջ վերապրող հայութեան լուսարձակի տակ գալը, դէպի Արեւմտահայաստան հետեւողական զբոսաշրջային այցելութիւնները, Սփիւռքի մէջ պահանջատիրութեան վերաշխուժացման փաստերը, եւայլն:

Այս բոլոր նախանշաններով հանդերձ, անհրաժեշտ է նաեւ վերատեսութիւն՝ պետական քաղաքական օրա-

կարգին վրայ առնուած Յեղասպանութեան խնդրի բանաձեւման: Կարեւոր յառաջընթաց են պետութեան ամենաբարձր պատասխանատւութեան գիրքերէն եղած յայտարարութիւնները, որոնք Յեղասպանութեան ճանաչումը կը նկատեն ազգային անվտանգութեան անհրաժեշտութիւն, հակառակ անոր որ գեռեւս առկայ է հակասական եւ շփոթառաջանող թուրքիոյ հետ «առանց նախապայմանի յարաբերութիւններ» սկսելու պատրաստակամութեան պաշտօնական դիրքորոշումը: Պարզ է, որ երբ Արեւմտահայաստանի պահանջատիրութեան վերասահմանման մասին մտածուի, սեղանի վրայ պիտի դրուի Հայաստանի եւ թուրքիոյ սահմաններու հարցը, Սեւրի եւ Լոգանի դաշնագրերը: Այս իմաստով, դեսպան Արա Պապեանի նախաձեռնութիւնը՝ վերատեսութեան ենթարկելու Սեւրի անվաւերականութիւնը, անկիւնադարձային նորութիւն է, ազգային սթափումի պահ մը, որուն ուղղութեամբ գեռեւս ահազին եւ նիւթական, եւ մտաւորական ներդրումի աշխատանքի դաշտ կայ:

Կարելի է մինչեւ իսկ ենթադրել, որ Սեւրի վաւերականութեան վերահաստատման ակտիւզմը ամենաճիշդ ուղին ըլլայ Արեւմտահայաստանի պահանջատիրութեան վերասահմանման եւ նոյնիսկ արդարահատոյցի գործնական առաջարկներու բանաձեւումին: Կը մնայ ըսել, որ հողային պահանջատիրութիւնը անիմաստ է այնքան ատեն որ հայրենագարձութեան ծրագիր չկայ: Ճիշդ է, գործնական չէ այսօր հայրենադարձութեան մասին մտածել Արեւմտահայաստանի վերաբնակեցման հեռանկարով, սակայն անպայման որ դէպի Հայաստանի հանրապետութիւնն եւ ազատագրուած տարածքներ հայրենադարձութեան պետական ծրագրի մը ստեղծումը կրնայ հանդիսանալ առաջին յանձնառութիւնը դէպի Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի կերտում:

Խ. ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵՍԱՆ

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽՏԱՅԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԱՆՈՐ ՇՈՒՐԶ

Խորհրդային Միութիւնը փուլ եկաւ, բայց անոր քաղաքականութիւնը կը շարունակուի հայ կեանքի մէջ: Երէկ՝ գաղափարաբանական, այսօր՝ առեւտրական շահախնդրութեամբ: Այդ քաղաքականութիւնը յայտարարւած էր, գաղտնիք չէր. Խորհրդային Միութիւնը հողային պահանջ չունէր թուրքիային: Հայաստանի Հանրապետութիւնը այսօր կ'ըսէ՞ այլ բան: Հայկական արտասահմանը, որ անցեալին «Ուիլսընեան սահմաններ»ու գործադրութիւնը կը պահանջէր, կը խօսէր բռնագրաւեալ հողերու մասին, աստիճանաբար սահեցաւ դէպի անբովանդակ կարգախոս մը, զոր յաճախ քաղաքականութիւն կը համարենք. Ցեղասպանութեան նանաչումը: Ազգի լինելութեան տեսանկիւնէ՝ անհեռանկար իրարանցում մը, նոյնիսկ եթէ խորհրդարաններ այդ կը քուէարկեն եւ մենք կը խանդապառուինք յաղթականի պէս:

Հողային պահանջ չունենալու կամ Ցեղասպանութեան ճանաչումը հետապնդող տեսակ մը քաղաքականութիւնը գիտակցարք կամ հաւկուրութեամբ ջաղացքի քար կը դնէ պատմութեան, դէպի երու եւ անոնց հետեւանքներուն վրայ, զանգուածները կը տանի կողմնակի ուղղութիւններով եւ ազգը՝ դէպի անել, հակառակ հայրենասիրական-զգացական ճառերու, ցեղասպանը անհանգստացնող - եթէ կ'անհանգստանայ - կամ բարոյական յաղթանակներու: Ի դէպ, չենք ձանձրացած եղիշէն ժառանգըւած բարոյական յաղթանակի դարերէ ի վեր տեսող բաւարարուելու յուղումներէ...: Ցեղասպանութեան անսկիզբ եւ անվանական հետապնդման ճամբուն վրայ կատարուած զոհողութիւնները եւ աշխատանքը սոսկ զգացական կերպով հայրենասիրական են, նոյնիսկ գործնական չեն, պրագմատիկ չեն, քանի որ, կ'ենթագրեմ, գործնապաշտութեան կը գիմենք տեղ մը հասնելու համար: Այս պարագային չեմ տեսներ եւ չեմ հասկնար թէ ո՞ւր կ'ուզենք հասնիլ եւ ի՞նչ ընելու համար:

Հմուտ պատմաբան ըլլալու կարիք չկայ հասկնալու համար որ թուրքիա Ցեղասպանութիւն գործած է, իր ժողովուրդը ստուար մեծամասնութեամբ մասնակցած է այդ ոճիրին, անոր հետեւող բռնագրաւումներէն եւ կողոպուտէն դեռ կը շարունակէ օգտուիլ: Ժամանակակից թուրքերը չքմեղացնել անցեալի դէպի երուն յարաբերաբար՝ դիւնագիտական դատարկաբանութիւն է, անոր հետեւն հայեր թէ միջազգային համայնք: Հարցին այս ձեւով չմօտենալ կը նշանակէ դաւաճանել Հայ Դատին եւ խաբել նոր ու գալիք սերունդները: Ճիշդ է որ մանր քաղքենիներ իրենց խիղճը կրնան հանդարտեցնել եւ շրջապատէն ընդունելի համարուիլ այս կարգի թերամ քաղափարներով եւ իրարանցուներով, նոյնիսկ անոնք՝ որոնք հոետորութեամբ կը գինովնային եւ կը թուին հանդարտած ըլլալ, եւ գոհացած՝ հանգամանքներով, աթոռներով, եւ այդ կարգի բաներով:

Պահանջենք, արդէն կը պահանջենք Ցեղասպանութեան ճանաչումը, բայց առանց շերտելու պատմական եւ քաղաքական իրողութիւնները, չեմ հասկնար ո՞ւր տրամաբանութեան վրայ հիմնուելով առաջնահերթութիւններու կարգ հաստատելու: Մեր ինդիրը ամբողջութիւն մըն է: Ցեղասպանութիւնը չանչատել հիմնահարցէն, իր դրդա-

պատճառէն: Երբեք բաւարար չափով չենք ըսեր եւ չենք յիշեցներ որ Ցեղասպանութիւն գործուեցաւ հողի համար, բաւարար չափով չենք կրկներ, եւ մենք մեղի համար եւ արտաքին աշխարհին, տեղի ունեցած հայրենականութիւնը, ինչ որ ազգի լինելութեան տեսանկիւնէն նոյնքան եւ աւելի վատթար է որքան Ցեղասպանութիւնը: Այսինքն, առանց անհեռանը-կար գիւտանգիտական դատարկ իրարանցումներու, Ցեղասպանութեան ճանաչման մասին ճառ եւ նախաձեռնութիւն անանջատելի են հողային պահանջէն: Կրկնե՞նք. նման անջատում մեր ժողովուրդի իրաւագրկումը կ'օրինականացնէ եւ կը յաւերժացնէ: Թեթեւսոլիկ եւ մակերեսային յաջողութիւնները ձեռք պէտք չէ բերել ի հեճուկս ազգի հիմնական իրաւունքներուն: Կախարդի աշկերտները, երբ քաղաքականութիւն կը խաղան, առանց կոթնելու ազգային պատմութեան, ազգային մշակոյթի եւ ազգային ինքնութենէն բխող ըմբռնումներու վրայ, վստահ կրնան ըլլալ որ իրենք զիրենք կը խաբեն, բայց ոչ թուրքիան, եւ հայերը սիամ տեղ կը տանին: Ճառ եւ նախաձեռնութիւններ երբ կանգ կ'առնեն Ցեղասպանութեան ճանաչման կարգախօսին վրայ, ոչ ճշմարտութիւնը, ոչ օրէնքը եւ ոչ իրաւունքը կը յայտնաբերուին եւ իրենք զիրենք կը պարտադրեն: Ո՞ր օրէնքը եւ արդարութիւնը կրնան ընդունիլ որ հայերը չկարենան ապրիլ իրենց հայրերու հողին վրայ, ուրիշներ տէր ըլլան իրենց սեփականութիւններուն:

Մինչեւ ե՞րբ կարելի կ'ըլլայ նոր սերունդը զօրաշարժի ենթարկել Ցեղասպանութեան ճանաչման անվազորդայն կարգախօսով, որ ոչ ազգային ծրագիր է եւ ոչ իսկ՝ համայնքային: Ազգային ըլլալու համար ան որպէս հեռանկար պիտի ունենայ հայրենիքը, Հայաստանը, որուն մէկ բեկորն է Հայաստանի Հանրապետութիւնը: Անհրաժշտ է առաջադրանքները եւ անոնց ընկերացող ճառը յստակացնել եւ անոնց տալ իրենց իսկական ազգային նկարագիրը:

Եւ լաւ է երբեմն յիշել որ դեռ շատ մօտիկ անցեալին, բռնագրաւուած Հայաստանի պատապութեան դաստիարական կամ համար առաջարկանութիւնը, ինչ կը վերաբերի ազգի իրաւունքներուն, կը դնենք իր ուղերուն վրայ, գորոս կը բերենք արուեստի եւ արուեստական մշուշներէն, որ այլեւս չկրկնուին ծէսերը եւ ծիսական դիմումները այս կամ այն երկրի դեկապարին: Այսինքն, պիտի յաջողինք աւելի յստակութեամբ հասկնալ եւ գնահատել պատմութիւնը եւ հայկական ներկայ կացութիւնը, եւ ընթանալ ու առաջնորդել աւելի յստակութեամբ, որպէսզի զօրաշարժը տարին մէկ անգամ կրկնուող եւ յաճախ ճանձրացնող ծէս չըլլայ, անհամ դարձած բլիշէներու կրկնութեամբ, որոնց ճիշդ է որ մարդիկ ներկայ կ'ըլլան պարտականութիւն մը կատարելու բաւարարութիւն զգալու համար, քանի որ ոչինչ պիտի ունենան ընելիք տարուան մնացեալ օրերուն:

Եթէ չուզենք անգամ յուետես ըլլալ, կրնա՞նք լաւատես ըլլալ...

Յ. ՊԱԼԵՍՆ

## Մալթայի փաստաթուղթերը

Ի ձեռին ունիմ Վարդգէս Եղիայեանի «Մալթայի վաւերաբուղբերը» անուն գիրքին բրերէն բարգմանութիւնը, որ 2007-ի Օգոստոս ամսուան մէջ լոյս տեսած է Ռակը Զարաքոլուի «Պէլկէ» հրատարակչատան կողմէ: Նատ հետաքրքրական եւ շատ կարեւոր այս գործին բրերէնը կը պարտինք Ժէյիրմենիերի, իսկ նախարանը Ալի Սահս Զէրինողլուի: Այդ բրերէն յառաջարանը շատ յանկուցիչ է եւ կ'ուզեմ համաօտիւ տպալ հայերէնով էական կէտերը: Բայց նախ նանչեանի Վարդգէս Եղիայեանը:

Ան ծնած է Երովպիա, 1936-ին: Հայրը գոնիացի՝ 1915-ի ազատողներէն եղած է: Վարդգէս իր երկրորդական ուսումը առած է Կիպրոս, Ամերիկեան ակադեմիայի մէջ, ուր կային նաև բազմարի բուրք դասընկերներ: Ապա աւարտած է Գալիֆորնիոյ Պըրքի համալսարանի պատմութեան բաժինը: Աւելի ետք, Սան Ֆօրե-ի իրաւաբանական վարժարանի իր դոկտորութեան վկայագիրը առած է: Աշխատած է Գալիֆորնիոյ Գիւղական շրջանի օգնական կազմակերպութեան մէջ, որ երկրագործներու հանդէպ կուսակալ Ռանըլտ Ռիլընի տնտեսական կարծը բաղաքանութեան մէջ ծառացող, աշխատաւորներու իրաւունքը պաշտպանող եւ շահու հետամուտ չեղող հաւաքական հաստատութիւն մըն էր:

1974-ին «Ճաշտութեան կամաւորներ» ու օգնական դեկավարի պաշտօն ստանձնեց եւ 90 երկիր

պտտելով, 7000 Հաշտութեան կամաւորներու աշխատանքը լննարկեց: 1980-ին կազմեց իրաւական հաստատութիւն մը եւ սկսաւ գործել յատուկ բացուած դատեր, միջազգային իրաւական դատեր, վարչական դատեր, ցեղասպանութեան դէմ բացուած դատեր եւ պատմական դատեր: 1987-ին մեծ դեսպան Մորկըն-բառուի յուշերը կարդալէ ետք, որոշեց ապահովութեան ընկերութիւններու հայերու ունեցած պարտերով հետաքրքրութիւն: 18 տարի ետք New York Life եւ AXA ապահովութիւններու դէմ բացած 98 միլիոն տոլարի դատը շահեցաւ: Այդ բարդ դատի արդիւնքով իրաւաբանական մարզի մէջ արմատական բարեկարգումի ճամբայ բացած ըլլալու իրը վարձատրութիւն, California Lawyer Magazine-ը Վարդգէս Եղիայեանի եւ իր փաստաբաններու ընկերակցութեան տուաւ «Clay» պատուաբեր մրցանակը:

Բացի իր վարած դատերէն, Վ. Եղիայեան յանախ դասախոսութիւններ կու տայ զանազան համալսարաններու մէջ: Ունի իրաւարակուած բազմարի գործեր: Ասոնց մէջ առաջին կարգի վրայ են՝ Volunteerism: The Real and Emerging Power, The Home of Africa: Challenges to American Foreign Policy; The Trial of Soghomon Tehlirian; The Case of Misak Torlakian; The Trial of the Young Turks; Ethning Cleansing in Anatolia, 1919-1923; Vahan Cardashian, Advocate Extraordinaire of the Armenian Case.

**Այժմ ձեռք առնենք Վ. Եղիայեանի յառաջաբանը:** Նախ կը նորոգենք մեր պատմական գիտութիւնը: 7 Հոկտեմբեր 1918-ին Թալէաթ փաշայի կառավարութիւնը հրաժարեցաւ: Սուլթան Մէհմէտ Զ. փարչապետ կարգեց Ահմէտ Թէզքիփ փաշան, որ հիթթիհատ-Թէրաքիփի նախորդ անդամներուն ճնշումին տակ չկարողացաւ գործ տեսնել եւ շաբաթէ մը հրաժարեցաւ: Սուլթանը պաշտօնի կոչեց հին սատրազամներէն Ահմէտ հղզէթ փաշան, որ իր կազմած կառավարութեան մէջ առած է Թալէաթի կառավարութենէն չորս հին նախարարներ: Օսմանեան կողմէ Տամատ Ֆէրիթ փաշա իսկ անգլիացիներու կողմէ Ամիրալ Գալդհորփ սատրազարեցին Մոնտրոսի զինադադարը: Այս Ամիրալը նշանակուեցաւ գրաւման ուժերու բարձրագոյն հրամանատար:

Անգլիական ուժերու եւ Օսմանեան կառավարութեան ջանքերով ձերբակալուեցան եւ հսկողութեան տակ առնուեցան կարելի չափով պատերազմական թուրք յանցաւորներ, զորս ատեն մը ետք պէտք եղաւ այլ երկիր մը փոխազրել: Յարմար դատուեցաւ Մալթա կղզին:

Եղիայեանի յառաջաբանը ամբողջութեամբ յատկացուած է Մալթայի աքսորեալներու եւ թուրքերու մօտ գերի մնացած 29 գերիներու փոխանակման յարակից պարագաներուն:

Անգլիացիները հաւատացած էին թէ հայոց դէմ

թուրքերու յանցաւարտ վերաբերումը միայն դեկավարներու եւ բարձրաստիճան պաշտօնեաներու յատուկ չէ եւ ժողովուրդին մեծամասնութիւնը գործոն դէր ունեցած է: Ստիպուած եղած են իրենց աշխատանքը խտացնել բարձր գոմիսէրին ի ձեռին ունեցած 173 հոգինոց ցուցակի մը վրայ: Ասոնք երեք բաժնի մէջ նկատի կ'առնուէին. ա) Անգլիացի գերիներու հետ անգութ վարմունք ունեցողներ՝ 18 անուն, բ) Տեղացի քրիստոնեաներու հետ անգութ ընթացք ունեցողներ՝ 147 անուն, գ) Զինադադարը անսաստող՝ 8 անուն:

Ատեն մը ետք, իբր յանցաւոր Մալթա փոխազրուած 150 ձերբակալեալներով որոշուեցաւ ընթացք տալ դատերուն:

Անգլիական գրաւման ուժերը դատական հանդըրւանին անցնելու համար Անգլիոյ արտաքին եւ դատական նախարարութիւններուն հետ տեւական շփման մտնելով հարցուցին ձերբակալեալները դատելու գործընթացին մասին, ջանացին սորվիլ եւ ստուգել իրենց իրաւասութիւններու: Եղիայեան այս առթիւ եղած թղթակցութիւններու իրաքանչիւրին թիւը կու տայ, քանի որ ամէն մէկը փաստաթուղթի հանգամանք ունի: Այս նախապատրաստական շըջանը որքան երկարեցաւ, նոյնքան յուսահատ եւ անձարակ դարձաւ գրաւման բանակի հրամանատարութիւնը եւ դատավարութեան փուլին չկրցաւ հասնիլ: Հարցը կեղոնացաւ իրենց գերիները ձեռք ձգելու աշխատան-



1915-ի կոտորածներէն ճողովրած հայ որբեր Սամսոնի մէջ

Քի՝ Մալթայէն փոխանակելի աքսորեալներու փոխարէն։ Յընթացս, թուրք ազատագրութեան շարժումը հետգհետէ յաջողութիւն կ'արձանագրէր եւ Մ. Քեմալի հեղինակութիւնը կը զօրանար։ Սակարկութիւն մը ծայր տուաւ անգլիացիներու եւ թուրքիոյ խօսնակ Պէքիր Սամի-ի միջնեւ, որ երկար բանակցութիւններէ ետք համաձայնութեան յանդեցաւ։ 22 անգլիացի գերի գէմ Մալթայէն 40 թուրքեր պիտի յանձնուէին՝ պահուելով (ա) կարգիները եւ (բ) կարգէն կարեւորները։

Պէքիր Սամի այս համաձայնագիրը Անգարա տարաւ վաւերացնելու խոստումով։ Սակայն երկու օր ետք հրաժարեցաւ։ Մ. Քեմալ մերժեց. իր պայմանն՝ էր բոլոր անգլիացիներու փոխարէն Մալթայի բոլոր թուրք ձերբակալեալներու ազատ արձակումը։ Անգլիա հակառակեցաւ բայց ի վերջոյ տեղի տուաւ։

Եղիայեան կու տայ անգլիական գաղափարաբանութիւնը. «Խորչրդարանի անդամներու ուժեղ հաւատքը այն է, որ մէկ անգլիացի գերի շոգենաւ մը թուրք կ'արժէ»։

«Բոլորին փոխարէն բոլորը» համաձայնութիւնը գոյացաւ 23 Հոկտեմբեր 1921-ին։ Մալթայի աքսորեալներէն 16-ն (որոնց համար կ'ըսէ թէ ամենէն կարեւուրներն էին եւ արտօնուեցան որ ազատ համարձակ փախչին) արդէն Մալթայէն ելած էին։ Իսկ միւսներուն փոխանակութիւնը եղաւ 31 նոյեմբերին։

Մոնտրոսի զինադադարէն (30 Հոկտեմբեր 1918) մինչեւ այս համաձայնութիւնը անցած երեք տարուան ժամանակը ճարտարօրէն օդտագործուեցաւ Մ. Քեմալի կողմէ, ինչ որ երիտասարդ թուրք դիւանագիտութեան համար յաղթանակ մը, իսկ հայերու համար անտեսումի եւ ուրացումի երկար եւ չարչարանալի շրջանի մը սկզբնաւորութիւնը պի-

տի ըլլար։ Սակայն ինչպէս գիրքին թրքերէն թարգմանութեան յառաջաբանը գրող Ալի Սահիթ Զէթինօղլու յատակօրէն կ'ըսէ՝ հայ զոհերուն դատը անկեղծ աւիւնով պաշտպանելու միտքով ճամբայ ելած անգլիացիները, հետզհետէ Խորհրդային Միութեան եւ իրենց միջեւ նոր թուրքիան «Փամբոն» գործածելու համար էր որ իրենց կեցուածքը փոխեցին։ Պարապի չէ համարուած «անգլիական քաղաքականութիւն» ասութիւնը, որ հոմանիշ է խորամանկութեան։

Կը յիշեմ Սեղրակ Պաղտոյեանը, որ տակաւին 1950-ին «Երբ գրախար գարձաւ գժոխիք» անուն իր յուշագրութեան մէջ ծանրօրէն կ'ամբաստանէր Անգլիան եւ Եւրոպան. «Եւրոպան Պոլիս նատած, դարձեալ դրաւ իր կախարդական ակնոցը եւ մօտ ու հեռուն դիտեց իր շահերուն լոյսով։ Այլեւս անոր աչքին չէին երեւեր բափուած ծով արիւնները, գործուած անարդարութիւնները, ծայրածաւալ աղաղակները։ Ան կը տեսնէր միայն իր շահը, եւ հոտը կ'առներ նոր շահերու եւ նոր վտանգներու»։

Այս գաղափարները նոր չեն. ոչ Պաղտոյեանի եւ ոչ ալ Ալի Սահիթ Զէթինօղլուի մատնանշած հնարամիտ գիւտերը նոր են։ Տակաւին քանի մը օր առաջ ամերիկեան Գոնկրէսին մէջ ընդունուելուն համար աշխատանք տարւող հայկական բանաձեւին առթիւ երբ կը խօսակցէի շատ սիրած եւ յարգած բազմահմուտ բարեկամի մը հետ, յիշեցուց նշանաւոր մէկ խօսքը Տիսրայէլի-ի, որ 1870-ական թուկաններուն Անգլիոյ վարչապետ էր. «Մեծն Բրիտանիա մնայուն բարեկամ եւ մնայուն թշնամի չունի. Մեծն Բրիտանիա ունի մնայուն շահեր»։

Այս մտածելակերպը եւ մեծ տէրութիւններու քաղաքականութեան մասին առաջ քշուած տեսութիւնները պէտք չէ զարմացնեն մեզ։ Մեզի նման փոքրիկ ազգերը մեծ երկիրներու ըրած դիմումներէն արդիւնք առնելու համար պէտք

Էպատճառաբանութիւն մը գտնեն եւ զանոնք համոզեն, թէ բաներ մը կը շահին իրենց տուած գոհացումին փոխարէն: Այսօր մեր քաղաքակիրթ որակած երկիրները մօտաւոր անցեալի գերեվաճառութիւնը բնական նկատող, գաղթավայրերու բնակչութիւնը բռնատիրութեամբ հպատակեցնող, անոնց ժողովուրդին տարած ընկերային նուազագոյն օժանդակութեան եւ առողջապահական ծառայութեան փոխարէն երկրին բնական հարստութիւնները շահագործող ուազմավարութիւնը կը մղէին: Գերեվարութիւնը շատ դժուար եւ ներքին պատերազմներու տեղի տուող հակամարտութիւններէ ետք է որ արգիլուեցաւ ԱՄՆ-ու մէջ. սակայն մտայնութիւնը մնացած է դեռ: Մինչեւ այսօր ամերիկացին չի հանդուրժեր զէնք կրելու օրէնքը վէճի նիւթ գարձնելու գաղափարը: Երբոպական երկիրները իրենց հպատակեցուցած գաղթավայրերը պատերազմներով միայն զիջեցան ուրիշ երկիրներու: Այդ քաղաքակիրթ եւ-րոպական երկիրները զանազան անուններով կարելի չափով կը պահեն տակաւին իրենց տիրապետութիւնը եւ շահերը, անկախ դարձած հին գաղթավայրերու վրայ, որոնց մեծ մասը արեան գնով շահեցան այդ պատութիւնը: Մարդկային իրաւունքներ եւ ՄԱԿ-ի կողմէ քաղաքակրթութեան ճամբու վրայ ընդունուած օրէնքեր այնքան նոր են, որ տակաւին սա կամ նա երկրի շահերուն դիմադրելու տրամադրութիւն ցոյց չեն տար:

20-րդ դարու Ա. աշխարհամարտին տրուած մարդկային գոհերուն թիւը այնքան բարձր էր, որ յաղթական կողմը այլեւս առանց պատերազմի շրջանի անցնելու միջոցառումի մասին խորհեցաւ: Պարտուած Տէրութիւններուն հողերը կցել չփորձեց եւ գոհացաւ դրացիներու միջեւ կոռուխնձոր դարձած սահմանային վայրերն ու գաղթավայրերը իր երկրին կցելով: Առ ի պահովութիւն արգիլեց զէնքի գործարաններ եւ զօրաւոր բանակ պահելը: Մինչդեռ Ռուսիա 1917-ի իր մեծ յեղափոխութեամբ՝ ընդհանուր զինադադարէն առաջ «չէզոփացաւ» եւ իր անջատ քաղաքականութիւնը վարեց: Արեւմուտքէն թուրքիոյ հետ իր սահմանները անփոփոխ պահելով հանդերձ իր նոր մտածողութիւնը եւ համայնաբութիւնը տարածեց աւելի փոքր դրացի երկիրներու վրայ եւ բռնատիրական կազմով յառաջացուց զօրաւոր Խորհրդային Միութիւնը: ԱՄՆ եւ Եւրոպա վկայ մնացին միայն:

Գերմանիա փշրեց զինք կաշկանդող շղթաները եւ առիթ տուաւ Բ. աշխարհամարտին, որու նախօրեակին իրը թէ հաշտութեան դաշինք կնքած էր Խորհրդային Միութեան հետ: Բայց այս հաշտութիւնը անկեղծ էր: Ֆրանսակիզբէն դրաւուած եւ մեկուսացած էր: Իսկ Անգլիա մինակ մնացած եւ Ամերիկայի նեցուկն ալ անբաւարար ըլլալով, պարտադիր եւ բնական դաշնակիցը դարձաւ Ռուսիոյ: Շահուած պատերազմէն ետք կրկին տեւական հաշտութեան մը հեռանկարով կայացած համագումարներէն ետք Խորհրդային Միութիւնը ետք քաշեց իր ոտքը գերմանական բանակը մղելու միջոցին դրաւած եւրոպական մասի արեւեան երկիրներէն, բայց իր երկաթեայ թաթը մնաց անոնց վրայ: Իր խորհրդային վարչակարգը դիմադրեց ընկերաբական արդի ըմբռնումին դէմ: Հաստատ մնաց իր ազդեցութեան տարածութիւնը եւ առիթ ստեղծեց պաղ պատերազմի մը՝ Արեւմուտքի դէմ:

Մինչ այդ սահմանային անփոփոխութեան օրէնքը ստորագրուեցաւ աշխարհի գրեթէ բոլոր երկիրներուն կողմէ, հակադրուելով ազգերու ինքնորոշման իրաւունքի սկզբունքին: Այս պայմաններուն տակ ինքնափար նահանգ ըլլալով գոյութիւն ունեցող որեւէ էթնիք համայնք, իր

պատկանած երկրին համար պալար ըլլալով մնաց: 1991-ին Խորհրդային Միութեան վլուգումէն ետք է որ արբանեակ երկիրները պիտի վայելէին իրական ինքնիշխանութեան երջանկութիւնը: Թէեւ պիտի հռչակէին անկախութիւն, սակայն իրենց կարգին իրենք ալ ունենալով ներքին հարցեր, պիտի պահէին իրենց պալարները:

Հայաստան եւ Սփիւռք այս անլոյծ պայմաններու տակ է որ կը տուայտին Ղարաբաղի հարցով, իրենց Ցեղասպանութեան զոհերուն հետ կ'ողբան նաեւ բռնագրաւած պապենական հողերուն համար, մէկ կողմէ կը տքնին իրենց գատին համար բանաձեւեր ընդունիլ տալ, միւս կողմէ կը չանան օրինակ՝ աճպարարութիւններով Սեւրի դաշնագիրը կեանքի կոչեւ:

Միթէ այս ուղղութեամբ տարուած աշխատութիւն չէ՞ նաեւ Վարդգէս Եղիայեանի վարածը: Նախ յայն յամառ աշխատանքը, որ կարգ մը ընկերներու հետ յաջողեցաւ գլուխ հանել New York Life եւ ԱՀԱ պահովագրութեան ընկերութիւններուն դիմաց: 38 միլիոն վճարում, նման նիւթի մը առթիւ թերեւս ստորագնահատուի ոմանց կողմէ: Պէտք չէ մոռնալ սակայն, որ բաժնուած այս գումարը Ցեղասպանութեան զոհերու տրուած աշխատութիւն հորհրդագումէ կամար համար ապահով մը չէ: Պէտք է ատոր ետին պահուած իրաւական փաստը փնտուել եւ խորհիլ թէ ինչո՞ւ թուրք կառավարութիւնը եւ թերթիրը բոլոր բարձրացուցին: Մինչ աշխարհի ամէն կողմը կեանքի համար ապահովագրուած մահկանացուի մը ժառանգորդները կրնան առանց դատի դիմելու գանձել ապահովագինը ընկերութեանէն, ինչո՞ւ թուրք կառավարութիւնը աղմուկ եւ բոլոր կը բարձրացնէ հայոց պարագային: Ի՞նչ անպատճութիւն, ի՞նչ վախ կայ պահուած այդ բոլորին ետին: Պէտք է Վ. Եղիայեան եւ առհասարակ իրաւագէտները հանրութեան հասկնալի կերպով բացատրեն հայ աշխարհը գիտնայ թէ ինչպիսի փաստեր կը պառկին այդ վախին ետին, որուն համար կ'անհանգըստանալ թուրքը կառավարութիւնը եւ կը ջանար կանխել:

Կայ նաեւ Վարդգէս Եղիայեանի այս գիրքը, «Մալթայի փաստաթուղթերը», որ համադրած է հեղինակը այնքան բժամանակորդները կրնան առանց դատի դիմելու գանձել ապահովագինը ընկերութեանէն, ինչո՞ւ թուրք կառավարութիւնը աղմուկ եւ բոլոր կը բարձրացնէ հայոց պարագային: Ի՞նչ անպատճութիւն, ի՞նչ վախ կայ պահուած այդ բոլորին ետին: Պէտք է Վ. Եղիայեան եւ առհասարակ իրաւագէտները հանրութեան հասկնալի կերպով բացատրեն հայ աշխարհը գիտնայ թէ ինչպիսի փաստեր կը պառկին այդ վախին ետին, որուն համար կ'անհանգըստանալ թուրքը կառավարութիւնը եւ կը ջանար կանխել:

Կայ նաեւ Վարդգէս Եղիայեանի այս գիրքը, «Մալթայի փաստաթուղթերը», որ համադրած է հեղինակը այնքան բժամանակորդները կրնան առանց դատի դիմելու գանձել ապահովագինը ընկերութեանէն, ինչո՞ւ թուրք կառավարութիւնը աղմուկ եւ բոլոր կը բարձրացնէ հայոց պարագային: Ի՞նչ անպատճութիւն, ի՞նչ վախ կայ պահուած այդ բոլորին ետին: Պէտք է Վ. Եղիայեան եւ առհասարակ իրաւագէտները հանրութեան հասկնալի կերպով բացատրեն հայ աշխարհը գիտնայ թէ ինչպիսի փաստեր կը պառկին այդ վախին ետին, որուն համար կ'անհանգըստանալ թուրքը կառավարութիւնը եւ կը ջանար կանխել:

Ա. Ա. Զէթինովուր, գրի առած իր յառաջաբանին մէջ կարեւոր ծանօթութիւններ կը հաղորդէ եւ հետեւութիւններ հանէ ներքին գործոց նախարարութեան կողմէ կատարուած հրատարակութիւններէն եւ Մալթայի փաստաթուղթերէն օգտուելով:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ: Կենսագրութիւնները հրատարակուած մասնակին չորսը Մալթայի փաստաթուղթերէն:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ: Կենսագրութիւնները հրատարակուած մասնակին չորսը Մալթայի աքսորեալներէն չորսը Մալթայի աքսորեալները են:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:


- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:


- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութեան մէջ:

- Մալթայի աքսորեալները, աքսորի աւարտէն սկսեալ կարեւոր պաշտօններու եկած են թուրքիոյ Հանրապետութ

## ԿԵԱՆՔԸ ԵՂԵՇՈՒՆ ԱՌԱՋ



Խարբերդի Տէր Ստորևամ ընտանիք



Հայ հարսմենորմեր Ամասիոյ մէջ



Մարտինցի ընտանիք



Ազնօսպցի հայուհիներ



Կարմեցի հայուհիներ

Քը բացատրող կարեւոր փաստերէն են<sup>(1)</sup>:

- Մալթայի փաստաթուղթերը, ձեռք անցուած Օսմանեան մօտ 150 դեկավար եւ պաշտօնեաներու Ա. աշխարհամարտի ընթացքին գործունէութեան պատմութիւնն են: Պատերազմի կղզիացման պայմաններուն մէջ բնաջնջուած ժողովուրդի մը պատմութիւնն են: Այս բնաջնջուած ժողովուրդին հարստութեան վրայ ձեռք գրուելուն եւ այս հարստութեան վրայ բարձրացած վաճառական պուրդուա դասակարգին, նաեւ հիմնարկներուն պատմութիւնը: Վկաներուն եւ անիրաւուածներուն ալ պատմութիւնն է նոյն ատեն:

- Այս ծածկագրութիւններուն քակուիլը կազմակերպութեան յատակը ցոյց պիտի այս. այդ պատճառով ալ ջանք կը տարուի մշուշի խաւը թանձրացնելու եւ 1915-ը մուցնելու:

- Մալթայի փաստաթուղթերը մեր մօտաւոր անցեալի վրայէն մշուշի վարագոյը կիսով բանալով, պիտի պատմէ նաեւ թէ ինչո՞ւ պէտք է ճանչնալ Հայկական Յեղասպանութիւնը:

- Մալթայի փաստաթուղթերը նոյն ատեն շարունականութեան մը պատմութիւնն են: Պատմութիւնն են նաեւ այն մասին, թէ այս տեղեկութիւններով, ո՞ւր կարելի է հասնի Հանրապետութեան մէջ:

- Նոյն ատեն Սուսալուքին<sup>1</sup> եւ «Կանանչ»<sup>2</sup>ներուն պատմական արմատներուն ալ պատմութիւնն է:

Պէտք է ընդունի որ Զերինօլուի լեզուն եւ ոնք գեղեցիկ է եւ արդիական: Սակայն երբեմն հեռու է պարզ եւ դիւրահասկնալի ըլլալէ: Տրուած ըլլալով որ թարմամիշը կարելի չափով հաւատարիմ մնալ ջանացած է բնագրին, ընթերցուղը պարտի որոշ ջանք մը ընել օգտուելու համար այդ գեղեցիկ ոնով տրուած տեղեկութիւններէն:

- Մալթայի փաստաթուղթերը հայ ժողովուրդի ողբերգութեան «Բէալ փոլիթիք»ին զոհ մատուցուելուն ալ պատմութիւնն են:

- Մալթայի փաստաթուղթերը մեծ պետութիւններուն անբարոյական կեցուածքին ալ պատմութիւնն են: Մարդկային իրաւունքներուն կայսերապաշտ շահերու զոհ դառնալու, փաստաթուղթերու դէմ անպատիմ մնալու օրինակին անզուգական յուշարձանն են: Յեղասպանութեան յանցանքին անպատիմ թողուելով վարձատրուելու եւ ցեղասպանական նոր յանցանքներու հրաւէր են: Արդարեւ, Հիթլէր 1939-ին բացայայտորէն յայտնած է թէ այս պատմական ողբերգութեան անպատճելիութենէն համարձակութիւն պիտի առնուի: Մեծ տէրութիւններու անբարոյական վարմունքը, որպէս ցեղասպաններու հրաւէր, 20-րդ դարու ամօթալի պատմական մէկ հաստուածն է: Անպատիմ մնալու համարձակութիւնը՝ գործուելիք ցեղասպանութիւններու հրաւէր եղած է: Նացի Գերմանիոյ մէջ, Ալմերիա, Անֆալ, Պունիա, Ռուանտա, Քոսովո, այսօր ալ Տարֆուրի մէջ եղածները տարբեր չեն: Հանգստորէն կրնանք ըսել որ անպատիմ մնալն է համարձակութիւն տուած իրենց:

- Մալթայի փաստաթուղթերը հետախուզել՝ կը նշանակէ նաեւ Հանրապետութեան արմատներուն մէջ գտնուող իրականութիւնները մէջտեղ հանել: Մալթայի թղթաձրարը հետապնդել՝ 1915-ի դէպքերուն հարցաքննութիւնը ընելու, միաժամանակ կազմակերպութիւն<sup>3</sup>ն ալ հարցուփորձելու իմաստը ունի: Մալթայի փաստաթուղթերուն մէջ անունը յիշուող անձերուն հետախուզութեամբ, մինչեւ օրս երկարող շղթային կը հասնինք: Ինչպէս Մալթայէն դարձողները, ասոնց գաւակներն ալ թուրքիոյ Հանրապետութեան ամենաբարձր աստիճաններուն վրայ

կը տեսնենք:

- Մալթայիներու հետքը փնտուելու ատեն, 1915-17 տարիներու միջեւ հայոց աքսորուած վայրերուն մէջ գտնուող քաղաքական պաշտօնեաներուն շատ ուշագրաւ կեանք մը ունենալը տեսանք: Գայմագամ (գաւառապետ) եւ մութասարք Փներու (նահանգպապետ) մասին եղած տեղեկագրութիւններուն մէջ իրենց ապագան տեսանք: Ասոնցմէ անոնք, որոնք կեղրոնէն եկած հրամաններուն հակառակ հայոց աքսորին կամ սպանդին չէին արտօնած իրենց կեանքը կրոսնցնել, քիչեր ալ բախտաւոր եղեր եւ այլ տեղեր պաշտօնի կոչուեր են: Ոմանց «սիճիլ»ին (վարքացոյց, պահարան) մէջ «ինքնութիւնը ճշգել կարելի չեղող ոճագործներու կողմէ մեղցուած» գրուած է: Ոմանց համար ալ «Հայ քոմիթաճիներու կողմէ սպաննուած» գրուած է: Ասոնք անբախտներու կարգին համարելով, ըսենք որ ուրիշներու համար այս վայրերուն եւ առաքման մէջ աշխատավայր առաջարկութեան մեջ պատմական յարժումի մէջ առաջին նետուղներէն ըլլալը զարմանալի չէ<sup>4</sup>:

- Ոմանց մասին թուականէ մը ետք ծանօթութիւն ունենալ կարելի չէ եղած: Ասոնց համար մականունի օրէնքը նոր ինքնութիւն շահեցուցած եւ ծածուկ մնալնուն մեծ չափով օգնած է<sup>5</sup>:

- Յեղասպանութեան տարիներու ընթացքին հայոց աքսորավայրերու մէջ քաղաքական մեծաւորներուն, Գաղթականաց եւ մերձաւորաց ընդհանուր տնօրէնութիւն, Ապահովութեան տնօրէնութիւն եւ Պարենաւորման նախարարութեան մէջ աշխատող անձնակազմին Գուվայը Միլլիէ-ի (Ազգային ոյժ) անդամ ըլլալը եւ անմիջապէս քեմալականներու յարիլն ալ գիպուածային չէ: Ասոնք ԻՏС-ի<sup>6</sup> կողմէ մասնաւոր գործակատար պաշտօնեայ ըլլալով պաշտօնի կոչուած եւ աւելի կերծ կարեւոր պարտականութիւններ առած են:

- Յեղասպանութեան յանցանքով փնտուողներն ալ Քեմալական շարժումին առաջին յարողներուն մէջ տեղ առած են<sup>7</sup>:

- Աքսորավայրը Մալթայէն վերադառնալէ ետք Անատոլու անցնողները, անմիջապէս այդ քաղաքներէն երեսփոխան նշանակուած են: Կարեւոր աքսորեալներուն վարչապետութիւն, նախարարութիւն, կուսակալութիւն եւ այլ դեկավար պաշտօներ տրուած են<sup>8</sup>:

- Դեկավոր Մէմէտ'ին (Էճգաճըպաշը)<sup>9</sup> գործատէրի մը վերածուիլը ոչ-իպամներուն հարստութեան վրայ ձեռք գրուելուն մէկ օրինակը ըլլալով՝ Անատոլուի մէջ ասոր նմաններուն շատ գտնուելը, «Ճեղահանութեան հարուստներ» տիտղոսին Անատոլուի մէջ գործածուելուն պարապին չըլլալը, Անատոլուին «տեղահանութեան հարուստներ»ուն համար դրախտ ըլլալն ալ ճշգենք:

- Յեղասպանութեան միացանքը անբախտութեան շրջանին վարձատրելու օրինակները կարելի է տեսնել Հայրենիքի ծառայութեան կարգէն ամսական ստացուղները ցոյց տուող պիտածիք (Ը) ցուցակին մէջ<sup>10</sup>:

- Ժեղասպանութեան միացանքը ամբախտանուածները Հանրապետութեան շրջանին վարձատրելու օրինակները կարելի է տեսնել Հայրենիքի ծառայութեան կարգէն ամսական ստացուղները ցոյց տուող պիտածիք (Ը) ցուցակին մէջ<sup>11</sup>:

- Ժեղասպանութեան պատմաբան Մուրատ Պարտագնը կը գրէ: «Իրականին մէջ Աթաթիւրքի Հայկական Հարցի նայուածքը միակ պատասխանը, տուած<sup>12</sup> ապրանքներն են: Աթաթիւրք, հայոց կողմէ սպաննուած պիտական մարդոց եւ պաշտօնեաներուն մեծ թոշակներ կապեց, գրաւուած հայկան ապրանքները իր ստորագրութեամբ տուած: Թալէ-



Խողխողուած հայ պատամիներ. Հայկական Ցեղասպանութեան ականատես գերմանացի սպայ Արմին Վեկմէրի լուսանկարչական արխիվէն

աթ փաշայի<sup>12</sup> կինը ամենաբարձր թոշակներէն «Հայրենիքի ծառայութեան ամսականը» կ'առնէր: Ընդհանուր կեղրոնի անդամներուն կիները եւ մասնաւոր կազմակերպութեան կարեւոր անդամներուն կիներն ալ Հայրենիքի ծառայութեան թոշակին կապուեցան: Ամենաբարձր թոշակն ալ էն-վէր<sup>13</sup> փաշային աղջիկը՝ Մահբեքբար Հանըմ ստացաւ:

- Մալթային գարձածներուն եւ Հանրապետութիւնը կազմողներուն միշեւ ազգականական կապերը ցոյց տալով եւ նաեւ 27 Մայիսի պետական հարուածին մասնակիցներէն ոմանց ալ ասոնց հետ ունեցած կապը ընդգծեով՝ Ալի Սահիթ Զէթինողլու Ցեղասպանութեան ամբաստանեալները եւ Հանրապետութեան կարեւոր կերտիչ անուններու յաջորդ սերունդները Ցեղասպանութենէն մինչեւ մեր օրերը երկարող նոյն արմատները ունենալով ընթերցողներուն կը ներկայացնէ:

Գիրքին՝ ծաւալով հարուստ, բայց առհասարակ նոյնիմաստ վկայագրութիւններով մասը ծայր աստիճան կարեւոր վկայութիւններ կու տայ: Անջատաբար առնուած այս վկայութիւնները առաջին լոնթերցումով մը կրնան հետաքրքրական նորութիւն չթուիլ այն պատճառով, որ վկաներուն պատմածները նորութիւն մը չեն բերեր: Որքան ալ երբեմն խժդուժ արարքներու եւ անմարդկային կարգադրութեանց եւ Հրամանատարներու վերագրումները եւ ամբաստանութիւնները նորութիւն չըլլան եւ մահէն պրծած աքսորեալներու յուշերուն մէջ հարիւր անդամ ատոնց նմանները կարդացած ըլլանք՝ մօտ 490 էջի մէջ տրուած վկայութիւնները թուլք-իսլամ վկաներու կողմէ եւ անգլիացիներու առջեւ կրկնուելու պարագային շատ աւելի ծանր եւ անառարկելի կը դառնան: Մալթայի մէջ վար գրուած եւ անգլիական դատարաններու յանձնելու համար կատարուած հարցաքննութիւններու միջոցին վկաներու, մանաւանդ թուրք վկաներու ամբաստանութիւննե-

րը որեւէ կասկածի առիթ չեն տար: Ապագային թուրք Հանրապետութեան կազմին մէջ կարեւոր պաշտօններու կոչուած այս անուններուն յատկացուած էջերուն մէջ, իւրաքանչիւրին համար կցուած է Անատոլուի եւ Հարաւային մասերու քարտէսը եւ անոր պաշտօն վարած ու յանցագործած վայրը շրջանակի մէջ առնուած է: Այսպէս 56 քարտէս կայ:

Վարդգէս Եղիայեանի գրքին նկարագրականը աւելի հասկնալի եւ ամբողջական ընելու համար կ'ուզեմ այդ կարգի վկայութիւններէն երկուքը թարգմանաբար տալ: Ամբաստանեալը՝ Արիֆ Պէյ  
Պաշտօնը՝ Տիարպաքըրի երեսփոխան  
Չերքակալութիւնը պահանջող՝ Անգլիական բարձրագոյն յանձնախումբի անդամ քաղաքապետ Ռիյան  
Ամբաստանութիւնը կատարողը՝ Խալամ երեսփոխան մը:

«... Աքսորները սկսան Մայիս 1915-ին: Կարաւանը եղը 680-ի չափ ըլլար, կը զրկուէր գետէն վար ուղղութեամբ: Առաջին խումբը միայն այրերով կազմուած էր: Վատահամբաւ ոճրագործներու հետ կարգագրութիւններ կ'ըլլար եւ կարաւանը գետին եղերբով քիչ մը երթալէ ետք հաւաքաբար կը սպաններէին: Դիակներուն վրայ ինչ որ կար կը վերցուէր եւ հասոյթը կուսակալին կը յանձնուէր: Երկու սեռի պատկանող եւ ամէն տարիքի անհամար հայ կարաւաններ ճամբայ կը հանուէին եւ հետզհետէ աւելի մօտ հեռաւորութիւններու վրայ հաւաքաբար կը սպաններէին: Տիարպէքիր եւ շրջակայքը ուրիշ նահանգներէ եկող աքսորեալներու համար սպանդի կերպն դարձած էր: Ոճիրներուն որոշ մէկ մասը անկասկած միւս նահանգներուն ճամբու ընթացքին կը կատարուէր, սակայն բուն սպանդը Տիարպէքիր մէջ եւ կամ մօտակայքը կ'իրագործէիր: Այս ընթացքը մինչեւ կուսակալ Ռէշիթին ետ կանչւիլը՝ մինչեւ աշուն շարունակուեցաւ: Լրատու Զիւլֆիւ



Պիրլիսի մօտ սպաննուած Օսմանիան բանակին մէջ ծառայութիւն կատարող հայ զինուորներ

մինչեւ 1915-ին Սեպտեմբերը Տիգրպեքիր նստած, վերջը կուսակալին ըրածներուն հաւանութիւն չյայտնելով գժուելուն եւ իր կեանքէն ալ վախնալուն համար բնակութիւնը իսթանպուլ փոխադրած էր: Այս շրջանին կուսակալին հրամանները չգործադրող մաս մը ենթականեր գործէ հանուած, երկուքն ալ մեռցուած էին: Ասոնք Լիճէի գաւառապետ Նեսիմի Պէյ եւ Պէշիրի գաւառապետ Սապիթ Սուտի էին»:

Երկրորդ «Հերոս» է էճզաճը Մէհմէտ կոչեցեալը:

Իրաւասու անգլիացի զինուորականութեան կողմէ

16 Ապրիլ 1919-ին Պաթումի մէջ ձերբակալուած է որպէս 1915-ի էրզինճանի սպանդի պատասխանատու յանցապարտ: 22 Յունուար 1920-ին հսկողութեան տակ փոխադրուած է Պոլիս, հոնկէ ալ Զանաք: 15 Մարտ 1920-ին դրկուած է Մոնտրոս:

Անգլիոյ բարձր պատուիրակը Անգլ. Արտաքին գործոց նախարարութեան 24-11-20 թուակիր եւ 1552 թիւ Մասնաւոր յանձնախումբի տեղեկագիրը զրկելով յանձնարարած է որ էճզաճը Մէհմէտ հսկողութեան տակ առնըւի եւ դատի տրուի:

Անգրկովկասի ընդհանուր Կեդրոնական բանակատեղին, գօրավար W.H. Beach-ի ստորագրութեամբ, Թիֆլիս՝ 25-5-1918 թուակիր նամակով Անգլիոյ զինուորական կցորդին գրուած էճզաճը Մէհմէտի ուղղեալ ամբաստանութիւնները կը վերաբերին՝

ա) էրզինճանի մօտ 1915-ի Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին եւ

բ) էրզրումի եւ էրզինճանի միջեւ, Սանսա-ի հովիտին մէջ 1918-ի Ապրիլին Հայոց հաւաքական սպանդին

գ) Նաեւ հայ կիներու բռնաբարումին:

Այս անգիտական հաւասարի վաւերաթուղթերէն զատ կան նաեւ վկայագրութիւնները 6 հայ կարեւոր անուններու՝ որոնց երեքը թուրք բանակի սպայ, եւ հարուստ ընտանիքներէ բռնի կերպով խլուած եւ իրը հոմանուչի վարդուած երեք երիտասարդ գեղեցիկ կիներու: Ուղղակի իրենց բերնէն լսուած եւ գրի առնուած են: Կարելի՞ է չյիշել Ռազինարանատ Թակորի սա խօսքը. «Ամէն հարստութեան տակ ամօթ մը կը պառկի»:

Հնթերցողներու գիտակցութեան յանձնելով Մալթայի փաստաթուղթերէն մասնիկներ, մանաւանդ հեղինակ Վարդէս Եղիայեանի եւ նախաբանին խմբագրութիւնը

ընող Ալի Սահիթ Զէթինօղլուի մեկնաբանութիւնները եւ հանած հետեւութիւնները, մեր աչքերը կը բացուին, սակայն մտքերը կը պղտորին անդրադառնալով՝

1) Թէ 1915-ին սկսած գէպքերը, ոճրագործութեան ո՞ր դասակարգին ալ դասէք, անուանէք բռնագաղթ, աղէտ, սպանդ կամ ցեղասպանութիւն, ինչպէս եւ ինչպիսի՞ պայմաններու տակ մնացեր են անպատճ:

2) Թէ այդ ոճիրներուն գլխաւոր գերակատարները ինչպիսի կարեւոր եւ պատուաբեր պաշտօններու վրայ հաստատուեր են:

3) Եթէ 1915-ի ճիւաղային յղացողները եղած են իթթիչատական երիտթուրքերը, զանոնք իրենց ազգային ապագայ շահերու հեռանկարով անպատճ եւ ազատ արձակողները անգլիացիներն էին, յանուն նորակազմ պետութեան կամաւոր եւ պարտաւոր կերպով զանոնք ներող եւ մինչեւ կուսակալի, նախարարի, նոյնիսկ վարչապետի աթոռներու վրայ նստեցնող, զանոնք բանակի հրամանատար կարգողն ալ Մ. Քեմալ (Աթաթիւրքն) է եղած:

4) Վասնզի այս նոր զեկավարներու մեղքերը ծածկել կարենալու, անոնց անցեալը մոռցնել տալու եւ հեղինակութիւն գարձնելու համար հարկաւոր էր որ նոր ինքնութիւն ունենային, ազգային ազատական նոր շարժումի, նոր կառավարութեան, Հանրապետութեան կազմութեան միջոցին հերոսութիւն ցոյց տուած ըլլալու առասպեկ հիւսուէր անոնց անուան շուրջ: Պայման էր անոնցմով նոր պատմութիւն կերտել, Հանրապետութեան գօրացման համար, նոյնիսկ եթէ սուտափ վրայ հիմնուած ըլլար: Եւ այդ էր որ ըրաւ Աթաթիւրք:

5) Այդ էր որ շարունակեցին ընել Աթաթիւրքի յաջորդները եւ կը շարունակին ընել այսօրուան զեկավարները:

6) 1915-ի ջարդարաբները եւ ջարդերուն ականատեսները գիտէին, ասոնց յաջորդ սերունդն ալ իրենց ծնողքէն սորված էին գէպքերուն իսկական բնոյթը: Սակայն Աթաթիւրք իրօք մեծ էր եւ փրկարար թուրք անհատին համար: Ան վերականգնած էր իրենց ազգային արժանապատութիւնը, կրցած էր վոնտել կամ հեռացնել իրենց երկիրը բրաւել փորձող օտար պետութիւններու բանակները, իրենց տուած էր ոչ-իսլամներէ մաքրուած երկիր մը: Իրենց համար նուիրական էր Աթաթիւրքի ամէն մէկ խօսքը, կը հաւատային որ իրենց արիւնը ազնիւ է:

7) Օտար երկիրներու բնակիչներէն շատեր, ի մասնաւորի անոնց զեկավար տարրը գիտէին տեղի ունեցած անարդարութիւնները, իրենց գեսպանները եւ միսիոնարներուն մասին, որոնց անունը ապագային պիտի ըլլար Ցեղասպանութիւն: Սակայն ինչպէս առաջն գիտէ՝ բարեկամութիւնը ուրիշ՝ առեւտուրը ուրիշ բան: Եւ պետութիւններու շահը կը պահանջէր լուել:

8) Բազմաթիւ պետութիւններ եւ միջազգային կազմակերպութիւններ, հայ համայնքներու դրդումով պաշտօնապէս կ'ընդունէին Հայոց Ցեղասպանութիւնը: Ասոնց կարգին էին ՄԱԿ-ը եւ եւրոփորհուրդը: Սակայն մեծ պետութիւններ իրենց գիրքը կ'որոշէին իրենց շահերու ուղղութեամբ: Կապոյտ գիրք, Մալթայի փաստաթուղթ, գերմանական արխիւ, աւստրիական արխիւ, թրքական արխիւ... Խօսուն իրականութիւններ. բայց տեսնելն ու գիտնալը ուրիշ բան՝ ընդունիլը ուրիշ բան: Եւրոպական Միութիւնն ալ մեծ պետութիւններուն նման կեցուածքով, բայց այս անգամ Ցեղասպանութիւնը ընդունելով կը վարէ ներողամիտ գտնուելու եւ թուրքիան չկաշկանդելու քաղաքականութիւն:

9) Թուրքիան կ'օգտուի իր աշխարհագրական դիրքէն եւ հնարամիտ թակարդ մը կը լարէ «Պատմութիւնը ձգենք պատմաբաններուն» առաջարկով: Խայծը տեսնող եւ կամաւոր կերպով թակարդը ինկողները կը սիրեն այս յանկերգը, որ օրօրի մը չափ անոյշ է:

10) Բայց թուրք երիտասարդութենէ ուսեալ մաս մը, որոնք կրնան պրծիլ կոյր ազգայնամոլութենէ, ինչպէս նաև արտասահմանեան թուրք համայնքներու մէծ մասը, հետզհետէ կ'անդրագառնան իրենց սորգեցուած պատմութեան խեղաթիւրեալ բնոյթին: Կը փնտուն ու կը գտնեն պատճառը թէ ինչու յաջորդական թուրք կառավարութիւններ քանի մը տարիին անգամ մը կը ստիպուին իրենց պատմութեան մէջ փոփոխութիւններ կամ յաւելումներ ներմուծել եւ կամ ծայրէն գրել:

11) Եւ երեւան կ'ելէ կարեւոր նպաստը ԱՐԱՍ-ի եւ ՊէԼԿէ-ի նման հրատարակչատուններու, որոնք հայերուն եւ օտարներուն գիտցած, սակայն թուրք երիտասարդներուն անձանօթ մնացած ինչ ինչ ծանօթութիւնները կուտան իրենց մայրենի լեզուներով: Ասոնք կարդացող երի-

տասարդ թուրքերը հետզհետէ պիտի դառնան աւելի գիտակից, իրենց թիւը տարուէ տարի պիտի աւելնայ: Այսօր իսկ վարչապետ էրտողան եւ թուրք պատմութեան կաճապի նախագահ Հալածողութիւնը ծայրէն գրելու մասին կը խօսին: Թերեւս այս նոր պատմութիւններն ալ պետական թեզին փոփոխակները ըլլան, սակայն կարեւոր չէ, անպայման նշարտութեան քիչ մը աւելի մօտ պիտի ըլլան:

12) Այս նկատումներով կրնամ պնդել թէ ԱՐԱՍ-ի եւ ՊէԼԿէ-ի թարգմանական աշխատանքները աւելի կարեւոր են, քան՝ հայկական բանաձեւեին ԱՄՆ-ու կողմէ ընդունուիլը: Վասնզի վաղուան կառավարութիւններուն մաս պիտի կազմեն այսօրուան առողջ մտածողութեան տէր թուրք ողջամիտ երիտասարդներ, որոնք օր մը մեծամասնութիւն պիտի ըլլան թուրք խորհրդարանին մէջ:

ԱՐԱՅ ԿԱՐՄԻՐԵԱՆ  
7 Դեկտեմբեր 2007, Մոնթրէալ

### ՅՂՈՒՄՆԵՐ

1. «Սուսուրլուք» վայրի մը անունն է «Պալքէսիր» քաղաքին պատկանող: Հոս կ'ակնարկուի հոն պատահած ինքնաշարժի արկածին, որուն զոհ գացած են ի մասնաւորի վատահամբաւ Ապատուաչ Զալլը եւ նախկին ոստիկանապետներէն Հիւտէին Գօճատաղ: Գտնուած թուրքիէն եւ իրենէն յայտնի եղած է այս միջոցաւ պետական մասնակցութիւնը մուլթ գործունէութիւններու: 1996-ի այս դէպքը որպէս Սուսուրլուքի գայթակղութիւն կը յիշուի արդի պատմութեան մէջ:
2. «Կանանչ»ը իսլամի գոյնն է. Հոս կը գործածուի ծայրայեղ կրօնամոլներու ակնարկութեամբ:
3. Կ'ակնարկուի իթթիհատականներու կուսակցական կազմակերպութեան:
4. Ազատական շարժումը համանշանակ է Քեմալական շարժումի:
5. Նախապէս ամէն անձի ինքնութիւնը յայտնի դարձնելու համար իր անուան սկիզբը կ'աւելցուէր նաեւ հօրը անունն ալ. «... զատէ» կամ «... օլլու». այսինքն՝ «... որդի»: Աթաթիւրք (Մուսաֆա Քեմալ) հաստատեց մականունի օրէնքը, որ գարձաւ տոհմի անուն եւ սերունդէ սերունդ կը շարունակուի: Մականունի այս նոր օրէնքին շնորհիւ անուանումի հին ձեւը մոռցուելով՝ մոցուեցաւ հին ինքնութիւնն ալ: Այս կերպով Մալթայի մէջ որպէս յանցագործ գիտցուած անձինք կերպով մը նոր ինքնութիւն շահելով իրենց անցեալը մաքրած եղան:
6. ITC-Իտիհատ Վե Տերակի Սեմիետի (Միասնութիւն եւ Յառաջդիմութիւն ընկերութիւն), որ երիտ թուրքերու կազմած ընկերութիւնն էր:
7. Տրուած անուններէն ամենէն աելի նշանաւոր դարձածներն են՝ Թէկֆիք Ռիւշթիւ Արաս (1883-1972), որ նոր թուրք կառավարութեան երկարատեւ Արտաքին գործոց նախարարը եղած է, 1923-1939 (այսինքն մինչեւ Աթաթիւրքի մահը):
- Թէկֆիք Սայամ (1881-1942), եղած է Թուրքիոյ Հանրապետութեան շրջանի չորրորդ վարչապետը:
8. Ասոնց կարգին հանրապետութեան կազմին շատ բարձր պաշտօններու հասած են՝ Բարուֆ Օրպայ (1881-1964), որ եղած է Հանրապետութեան առաջին վարչապետը (1922 եւ 1923):
- Ալի Ֆէթհի Օրբեար (1880-1943), վարչապետի պաշտօնով յաջորդած է Բ. Օրպայի (1924 եւ 1925):
- Շիւքրի Գայա (1883-1959), որ իսմէթ Փաշայի կառավարութեան մէջ եղած է Արտաքին գործոց նախարար (1923-24), իսկ աւելի վերջ վարած է երկար տարիներու ներքին գործոց նախարարութիւնը (1927-38):
- Ապտիւզալիք Ռէնտա (1881-1957), որ աներձագն է Թալէաթ

փաշային, վարած է զանազան նախարարութիւններ՝ որոնց կարգին է Տնտեսականը:

9. Եճզամը Մէհմէտի մասին Մալթայի փաստաթուղթերուն մէջ անգլիական աղբիւրներու կողմէ քաղուելով տրուած տեղեկութիւնները շատ յանգեցուցիչ են. ապշեցուցիչ մանրամասնութիւններ ըլլալով ասոնց մէկ մասը մէջբերեցի այս գրութեան վերջանին մէջ:

10. Թոշակառուներու այս ցուցակին մէջ աչքի գարնող ամենէն աւելի ծանօթ անունն է Ջլյա Կէօքալը (1875-1924): Այս համբաւաւոր բանաստեղծը եղած է փանթուրանական գաղափարախօսը եւ առող իսկ արքայի կարեւոր մէկ խորհրդատուն: Մալթային դարձած եւ աւելի ետք նախարար դարձած Ֆէզի Փիրինչչիօլուի գարմիկը ըլլալուն մասին մատնանշած է Ալի Սաիթ Զէթինողլու:

11. Հոս «տուած» բառը պէտք է առնել «նուիրած» կամ «բաշխած» իմաստով:

Այս առիթով կ'արժէ պահ մը անդրագառնալ Մուսաթափա Քէմալ Աթաթիւրքի անձին եւ գիմագծութեան, նաեւ հայոց պատմութեան մէջ ունենցած կարեւոր գերին մասին: Մ. Քեմալ ծանօթ է որպէս Սեւրի գաշնագրին դէմ ծառացող ազգային շարժումի մղիչ եւ ղեկավար: Հրամանատարութիւնը վարած է պարտուած թուրք բանակին մնացած գինուրականներու վերամիացումով կազմուած եւ հետզհետէ զօրացած ազատարար բանակին: Եղած է սրատես եւ մեծ դիմանագէտ: Կրցած է օգտուի Ա. աշխարհամարտի համաձայնական կողմի պետութիւններու ծածուկ մրցակցութեանն: Ասոնք կամք չունենալով պատերազմը շարունակել զինագագարէն ետք, ես բաշած են իրենց զօրքերը գրաւել վայրեն եւ յոյները ձգած են թուրք բանակին դէմ մինակ: Մ. Քեմալ սիրով ստանձնած է Անգլիոյ եւ Խորհրդային նուայոյ միջեւ չէղոք գօտի գերը, միաժամանակ սիրաշահելով եւ օգնութիւն ապահովելով Արեւելքի մեծ դրացիկն, որուն կրցած է կարծել տալ թէ նոր թուրքիան պիտի դառնայ համայնավար:

Ոչ մէկ փաստ գոյութիւն ունին 1915-ի Ցեղասպանութեան մէջ գեր ունեցած ըլլալուն, նոյնիսկ յայտնի է իր կեցուածքը, որով կը դատապահէր ներքութիւնը այդ անմարդկային արարքը: Հակառակ ասոր որոշ է որ կատարուած այդ իրողութեանէն ետք իրավիճակը ընդունած, օգտագործած եւ նոյնիսկ շարունակած է: Ազատեց եւ ներեց Մալթայի ձերբակալեանները եւ ամբաստանեալները, որոնց պէտք ունէր նոր վարչական կազմերու մէջ եւ զանոնք տեղաւորեկով բարձր գիրքերու վրայ, սիրաշահեցաւ անոնց հպատակութիւնը իր բռնապետական վարչապետին հանդէպ: Անոնց պէտք ունէր իր յեղաշըումները ի կատար հանելու համար, նաեւ սասանեցնելու համար քրտական ամէն տեսակ



1909-ի Կիլիկիոյ կոտորածներէն ճողովրած հայութեալու թարսուախ մէջ

**շարժում:** Օգտուեցաւ նաեւ հայոց վրայ ի գործ դրուած աքսորի եւ սպանդի արարքի արդիւնք յառաջ եկած հայաթափման հետեւանքով ստեղծուած իրավիճակին: Ոչ միայն Լօզանի դաշնագրին նախորդող բանակցութիւններու ատեն օգտագործեց Արեւելեան նահանգներուն մէջ հայոց բացակայութիւնը, այլեւ աքսորեալ հայերէն կերապրած եւ կրկին իրենց ծննդապայրը դասնալ ուղղողներու վերագրածը արգիլող օրէնք ընդունեց: Բոնի աքսորեալները՝ կարծես իրենց կամքով երկրէն գացած ըլլային, անոնց կալուածները լքեալ գոյք հոչէակելով պետութեան ապրանք դարձուց եւ տեղայի թուքերու եւ քիւրտերու չյափշտակուած տուներն ու արտերը բերուած եւ բնակեցուած թրքական ցեղի գաղթականներու բաժնեց: Թէեւ Լօզանի դաշնագրին պայմաններուն հաւատարիմ մնալու արամագրութեամբ իսթմանպուի մէջ ոչ-իւլամ փոքրամանութիւններու համար կրօնական եւ լեզուային ու մշակութային որոշ ազատութիւններ ցոյց տրուեցան, բայց աչքէ եւ հակողութենէ հեռու մնացած սահական հողերու վրայ ձուլումի գործընթացը եւ մշակութային ցեղասպանութիւնը ծրագրուած կանոնաւորութեամբ շարունակուեցան: Հազարաւոր եկեղեցիներ փլցուեցան, ոմանք թնդանօթի ուումքերու թիրախն դարձան: Քիւրտերն ալ իրենց բաժինը առին այս կաշկանդւմներէն: Մուսթաֆա Քեմալ կրցաւ յաջողցնել իր կրօնական, լեզուական եւ գրի, հագուստի եւ գլխարկի յեղաշրջումները եւ երկիրը որոշ չափով երոպականացնել՝ մանաւանդ մեծ քաղաքներու մէջ: Հակառակ բռնտիրական վարչաձեւին, կրցաւ ժողովրդակար եւ ժողովրդին մօտիկ ալ ըլլալ եւ սիրուիլ ու յարգուիլ՝ ինչպէս թուքիոյ մէջ, ոյոյնպէս եւ յաչս արտասահմանի:

Բազարիկ զգուշութեամբ եւ կատարեալ յաջողութեամբ հսկեց եւ կերտեց Օսմանեան եւ թուրք Հանրապետութեան 20-րդ դարունոր պատմութիւն մը, որուն մէջ ոչ միայն խօսքը չկար հայոց աքսորի եւ սպանդի, այլ նաեւ փոքրամասնութիւններու թիւին եւ մշակութային կալուածին: Ճառերու եւ հանդէսներու մէջ ամէն մարդ հաւասար իրաւունքներ ունէր, ամէն մարդ թուրք էր: Ցեղասպանութեան ուրացումի քաղաքականութիւնը այդ օրերէն սկսած էր. այնքան ամուր եւ հաստատ՝ որ 90 տարի կրցաւ

գիմանալ եւ շարունակուիլ:

Մ. Քեմալ սիրուեցաւ իր ժողովուրդէն եւ արժանի եղաւ Ալթաթիւրք անունին, որ կը նշանակէ թուրքերու Հայր: Իրենց պատմութիւնը գիտնալու իրաւունքէն զրկուած մանուկներն ալ գրեթէ նոյնքան սիրած էին զայն եւ քիչ չէր թիւր հայ աշակերտներուն, որոնք իմանալով Ալթաթուրքին մահը 1938-ին՝ սգացին եւ լացին: Անոնք եթէ կապրին տակաւին Պոլսոյ մէջ, ինչպէս յաջորդ սերունդները, թերեւս կը շարունակեն զարմանալ թէ ինչո՞ւ Սփիւրքը եւ եւրոպա 1915-1923 թուականը կու տան երբ կը խօսւի Հայկական Ցեղասպանութենէ:

12. Թալէաթ փաշա (1874-1921) գլխաւոր ճարտարապետն է Հայոց Ցեղասպանութեան:

Մարգկութեան ճանչցած ցանցառ արիւնաբրուներէն է, որ թուրքերու կողմէ կը յիշուի իբր ազգային հերոս: Գերմանիոյ մէջ սպաննուած է հայու գնդակով:

13. Էնվէր փաշա (1881-1922) «Միութիւն եւ Յառաջգիմութիւն (Իթթիհաս վէ Թէրքաքի)» կուսակցութեան անդամ, Թալէաթ եւ ձէմալ փաշաներու հետ յղացած էին Անատոլուն հայաթափելու ծրագիրը: Մէկն էր Հայկական Ցեղասպանութեան ճարտարապետներէն: Ամուսնութեան ճամբռվ փաշա տիտղոսը առած եւ դարձած է Օսմանեան բանակի հրամանատար: Փանթուրանական եւ փանիլամական ծրագիրներու մշակող եղած է: Իրեն կը պատկանի պարծենկոտ եւ լիբր սա խօսքը. «Առանց թուրք զինուորի մը կորուստի, ոչնչացուցի թրքութեան թշնամի հայերը»: Այս խօսքէն իսկ յայտնի կը դառնայ թէ իր երակներուն մէջ փոխան արեան թարախ կը լըջէր: Արեւելեան ճակատի վրայ ոռւսերը պարտութեան մատնելու եւ եղբայր թուրք պետութիւններու ճամբռան բանալու հեռանկարով մեծ բանակով յարձակում փորձած է, սակայն վերահաս ձմբան եւ պարենաւրման դժուարութեան պատճառաւ մեծ պարտութիւն կրած է: Թուրք պատմագէտ կամ բանասէրներ էնվէրը պատասխանատու ցոյց տուած են բազում անդամ տասը հազարաւոր թուրք զինուորի կորուստին: Մեռած է պատերազմական կոուի մէջ:

## ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻԵՐԵՐԻՆ

Թրքական ցեղերի Փոքր Ասիա եւ Հայկական լեռնաշ-  
խարհ ներխուժելուց յետոյ այդ տարածքներում պարբերաբար  
տեղի է ունեցել ոչ մուսուլման բնակչութեան բռնի իսլամա-  
ցում: Կրօնափոխութեան յարմար թիրախներից են միշտ հա-  
մարուել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում՝  
կարելի էր աւելի հեշտ ջնջել ազգային եւ կրօնական դեռեւս  
ձեւաւորուղ ինքնազիտակցութեանը: Հենց այս տրամաբա-  
նութեամբ է գործել Օսմանեան կայսրութիւնում մեծ տարա-  
ծում գտած եւ երկար գարեր կիրառուած մանկահաւաքի (գեւ-  
շիրմէ) ինստիտուտը, որն ունեցել է նաեւ «արեան հարկ» ան-  
ուանումը: Մանկահաւաքի ժամանակ կայսրութեան ոչ մու-  
սուլման բնակչութիւնից հաւաքուել են փոքրահասակ տղայ  
երեխաները, որոնց տրուել է կրօնական եւ ուսպանական կրթու-  
թիւն, եւ հենց նրանցից էլ ձեւաւորուել են ենիշերիների զօ-  
ռագնդերը:

Հայերը, լինելով Օսմանեան կայսրութեան ոչ մուսուլ-  
ման հիմնական ազգերից մէկը, բնականաբար, պարբերաբար  
ենթարկուել են բռնի իսլամացման, որը տարբեր ժամանակնե-  
րում ունեցել է տարբեր ծաւալներ: Յայտնի է, որ հայերի իս-  
լամացման վերջին լայնածաւալ ակցիան տեղի է ունեցել Հա-  
յոց Ցեղասպանութեան տարիներին: Եղել են դէպքեր, երբ  
կրօնափոխութեան շնորհիւ որոշ հայեր խուսափել են աքսո-  
րից եւ ջարդից, բայց դա չի ընդգրկել լայն ծաւալներ, քանի  
որ 1915-ին հիմնական նպատակը եղել է ոչ թէ ձուլել, այլ  
ընդհանրապէս ոչնչացնել հայ էթնոսը: Նշենք, սակայն, որ  
Ցեղասպանութեան տարիներին «կամովին» մուսուլմանու-  
թիւն ընդունելու հայերի պատրաստակամութիւնը ոչ միշտ է  
միանշանակ հաւանութեան արժանացել կառավարութեան  
կողմից, եւ այս առումով հետաքրքրի է ներկայումս Թուրք-  
իայի կառավարութեան (վարչապետի աշխատակազմի) օս-  
մանեան արխիտում պահպանուած՝ ներքին գործերի նախա-  
րարութեան 1915թ. Յունիսի 30-ին հայաբնակ նահանգներ  
ուղարկուած ծածկագիր գրութիւնը, որտեղ ասւում է, որ հա-  
յերի կրօնափոխութիւնը չի կարող խոչընդուն հանդիսանալ  
նրանց աքսորին: Աւելացւում է, որ վտանգի պահին հայերը  
բազմիցս են դիմել նման մեթոդի, սակայն յետոյ շարունակել  
են գործել մուսուլմանների դէմ:

Սակայն, չնայած այս գրութացմանը, եղել են որոշ բա-  
ցաւութիւններ, եւ արձանագրուել են դէպքեր, երբ իսլամա-  
ցումը, այնուամենայնիւ, փրկել է գաղթից եւ կոտորածից,  
վկայ՝ ներկայիս Թուրքիայում ապրող ծպտեալ հայերը:

Ինչպէս վկայում են մի շարք աղբեւրներ, այդ թուում եւ  
թրքական, Հայոց Ցեղասպանութեան տարիներին մեծ թուով  
հայ երեխաներ են առեւանգուել թուրքերի եւ քրտերի կող-  
մից: Շատ հազուադէպ իրենք՝ հայերը, աքսորի գնալիս, զգա-  
լով մօտալուտ արհաւիրքը, իրենց երեխաներին կամովին պահ  
են տուել հարեւան մուսուլմաններին (այդ երեխաները  
թրքական աղբեւրներում անուանում են «աւանդ թողնուած  
երեխաներ»): Որբ մնացած հայ երեխաների մի մասն էլ օս-  
մանեան կառավարութեան հրամանով հաւաքուել է թրքա-  
կան որբանոցներում եւ իսլամացուել: Այս մասին վկայող  
փաստեր են պահպանուած օսմանեան արխիւններում: Թուրք  
գիտնական իբրահիմ Էթնուրի 2005թ. տպագրած «Հայ  
կանանց եւ երեխաների խնդիրը Թուրքիայում 1915-  
1923թթ.» գրքում օգտագործուած են այդ թուականներին որը



American Committee for Relief in the Near East  
կազմակերպութեան կողմէ փրկուած հայ որբեր

եւ այրի հայ երեխաների ու կանանց խնդրի վերաբերեալ բազ-  
մաթիւ արխիւային նիւթեր, այդ թւում նաեւ Թուրքիայի  
վարչապետի աշխատակազմին կից օսմանեան արխիւի ծած-  
կագիր բաժնի նիւթերը: Բնականաբար, շարունակելով թրքա-  
կան «գիտական» աւանդոյթները՝ հեղինակն աղաւաղում է  
փաստերը կամ ներկայացնում իր ոչ առարկայական ու ոչ  
տրամաբանական գնահատականները տուեալ հարցի շուրջ.  
սակայն մեզ համար կարեւոր են գրքում տեղ գտած յատկա-  
պէս արխիւային նիւթերը, որոնք հետաքրքրի փաստեր են  
պարունակում: Համագրելով այս եւ այլ աղբեւրների ներկա-  
յացրած փաստերը՝ կարելի է եղբակացնել, որ Հայոց Ցեղաս-  
պանութեան տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն  
ու ձուլումը կատարուել են երկու մակարդակով՝ պետութեան  
եւ հասարակութեան լայն խաւերի կողմից: Այս փաստը Թուր-  
քիր չեն էլ մխառում, ուղղակի փորձ է արւում դա ներկայաց-  
նել այլ լոյսի ներքոյ եւ օգտագործել քարոզչական նպատա-  
կով:

1. Կոտորածից փրկուած, անտէր, անտուն, անխնամ  
մնացած հայ որբ երեխաները պետութեան աջակցութեամբ իս-  
լամացուել են եւ բաժանուել մուսուլման ընտանիքներին:  
Դա է վկայում օսմանեան արխիւում պահպանուած 1915թ.

Յուլիսի 10-ի թուագրուած գրութիւնը, որտեղ ասւում է, որ իսլամացուած որբ հայ երեխաներին պէտք է յանձնել բարեկեցիկ մուսուլման ընտանիքներին եւ յատկապէս այն գիւղեռում ու գիւղաքաղաքներում, ուր հայեր չկան: Եթէ երեխաների թիւը մեծ է, նրանց պէտք է յանձնել դժուարութեամբ ապրուսը Հոգացող մուսուլման ընտանիքներին եւ ամէն երեխայի համար ամսական նրանց վճարել 30 դուրուշ: Պէտք է ցուցակագրել այդ երեխաների թուի եւ գտնուելու վայրերի մասին տուեալներն ու դրանք ուղարկել կենտրոն: Յատուկ նշւում է, որ այս երեխաները յանձնուում են այդ ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրուի մուսուլմանական կրթութիւն: Նոյնաբովանդակ գրութիւններ հանդիպում են նաեւ հետազայտում՝ ուղղուած տարրեր նահանգների գեկավարներին: Ուշագրութեան է արժանի այն հանգամանքը, որ բոլոր այդ գրութիւններում յատուկ նշւում է, որ երեխաներին պէտք է բաժանել յատկապէս այն վայրերում, ուր չկան հայեր: Նպատակն այն է, որ թէկուզ հետազայտում էլ այդ երեխաները հարաւորութիւն չունենան շփուել իրենց ազգակիցների հետ եւ շատ հեշտութեամբ ձուլուեն ու խլամանան:

Սրան զուգահեռ՝ օսմանեան կառավարութիւնը, չնայած պատերազմական վիճակին, ինքն էլ է նախաձեռնուում որբանոցներ բացել, ուր հաւաքւում են որբ հայ երեխաները: Բնականաբար, այդ որբանոցներում հաւաքւուած հայ երեխաները իսլամացուում էին, սուանում մուսուլմանական կրթութիւն, եւ այդ ամէնը՝ պետական ամենաբարձր հսկողութեան ներքոյ: Օսմանեան արխիւններում պահպանուել են երիտրքական պարագուի էնվիրո գրութիւնները՝ ուղղուած ներքին գործերի նախարար Թալէաթին, որտեղ նա ցանկութիւն էր յայտնուում եւ պահանջուում, որ որբ հայ երեխաներն ուղարկուեն յատկապէս թրքական որբանոցներ (այդ տարիներին Օսմանեան կայսրութեան տարածքում գործում էին եւրոպական, ամերիկեան, միսիոններական որբանոցներ եւս): 1916թ. Մայիսի 9-ի ներքին գործերի նախարարութեանն ուղղուած գրութեան մէջ էնվիրո գրում է. «Կրօնափոխ եւ ոչ կրօնափոխ հայ որբերը եթէ ուղարկուեն մեր որբանոցներ, ես պատրաստ եմ ուղղմական պիտուից հոգալու դրա համար անհրաժեշտ ծափսերը»: Քանի որ որբանոցները ենթակայ էին կրթութեան նախարարութեանը, Թալէաթը, կրթութեան նախարարի համաձայնութիւնը ստանալուց յետոյ, 1916թ. Մայիսի 16-ին տեղեկացնում է էնվիրո, որ իսլամացած եւ ոչ իսլամացած հայ երեխաները կը վեցցուեն թրքական որբանոցներ, եւ ծախսեր կը հոգայ ներքին գործերի նախարարութիւնը:

Արդէն 1916թ. Յունիսի 1-ի՝ Մարտինի նահանգապետարան կրթութեան նախարարութեան ուղարկած ծածկագիր հեռագրում նշւում է, որ Մարտինի որբանոց պէտք է վերցնել միայն իսլամացած հայ երեխաներին: Աւելի վաղ՝ 1916թ. Ապրիլի 30-ին, ներքին գործերի նախարարութեան՝ հայ կանանց եւ երեխաների վերաբերեալ հրապարակած ընդհանուր հրամանի 3-րդ կէտում յստակ նշւում է. «Մինչեւ 12 տարեկան հայ երեխաներին վերցնել մեր որբանոցները»:

Որբ հայ երեխաների իսլամացման եւ ձուլման հարցով բաւական հետաքրքրուած միւս բարձրաստիճան պաշտօնեան յայտնի երիտրքական պարագուի ծեմալ փաշան է, որը զբաղուել է Սուրբիայում եւ Լիբանանում գտնուող հայ որբերի հարցերով: Նրա նախաձեռնութեամբ Ային թուրք ֆրանսական ճեղուիթական միսիային պատկանող մենաստանում ստեղծուել է որբանոց, ուր հաւաքուել են հայ երեխաները՝ թրքացուելու նպատակով: Յատուկ այս գործի համար ծեմալը Ստամբուլից հրաւիրել է փանթուրքիստ կին գրող Հալիթէ Էտիպին, որը յայտնի է Յեղասպանութեան տարիներին հայ

չանքերով: Հենց նոյն Հալիտէ Էտիպը հետագայում գրում է, որ Ային թուրքա որբանոցի իսլամացած հայ բոլոր երեխաներին տրուել էին թրքական կամ մուսուլմանական անձնանուններ:

2. Հայ երեխաների իսլամացման եւ թրքացման գործում մեծ ջանքեր են գործադրել նաեւ թրքական հասարակութեան լայն շրջանակները:

Ինչպէս նշեցինք, Հայոց Յեղասպանութեան տարիներին թուրքերը եւ քրտերն առեւանգել եւ խել են բազմաթիւ հայ մասուկների եւ իսլամացրել: Թրքական կողմը, չկարողանալով ժխտել այս անառարկելի փաստը, միեւնոյն ժամանակ չըջ է գցել այն վարկածը, թէ իբր «բարեկանթ» թուրքերին ուղղակի հումանիստական գրացումներից ելնելով՝ «փրկել» են աքսորեալ հայ երեխաներին: Անշուշտ, կարելի է ընդունել, որ երբեմն, շատ հազուադէպ դատեղի է ունեցել, բայց գերակշիռ դէպքերում հայ երեխաներին խել են՝ բռնութեամբ նրանց իսլամացնելու, թրքացնելու նպատակով, եւ դա անելիս առաջնորդուել են ոչ թէ հումանիստական, այլ զուտ անձնական, տնտեսական նկատառումներով:

Հասկանալու համար թուրքերի եւ քրտերի՝ աքսորեալ հայ երեխաներին «փրկելու» եւ իսլամացնելու շարժառիթները, մեր կարծիքով, ամենեւին երկրորդական չպէտք է համարել իսլամա-թրքական իրականութեան որոշ նրբերանգներ: Խելովնով՝ եւ անդունքով՝ հայ երեխաներին՝ մի կողմից ձեռք էին բերում ձրի աշխատոյժ եւ, միւս կողմից, յատկապէս հայ աղջիկ երեխաները դառնում էին նրանց հարեների զուր: Մի կարեւոր նրբերանգ էլ կայ՝ կապուած իսլամա-թրքական ամուսնութեան սովորոյթների հետ, համաձայն որի՝ տղայի կողմն ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի գործարք: Զեռք բերելով հայ աղջիկ երեխաներին, ինչպէս ցոյց են տալիս բազմաթիւ փաստերը, նրանք այնուհետեւ այդ աղջիկներին ամուսնացընում էին իրենց տղաների համար: Այս ամէնը լիովին տեղաւորում է ստրկավաճառութիւն բնորոշման սահմաններում, մանաւանդ, եթէ հաշուի առնենք, թէ ինչ հարուստ է Օսմանեան կայսրութեան փորձն այդ ասպարէզում:

Ներկայումս էլ թուրքիայում ծայր առած «էթնիք ճգնաժամի» քննաժրկման շրջանակներում անընդհատ ի յայտ են գալիս նոր փաստեր Յեղասպանութեան ժամանակ առեւանգուած հայ երեխաների, յատկապէս աղջիկների մասին, որոնց մուսուլմանների հետ ամուսնութեան հետեւանգներով ներկայիս թուրքիայում ծեւաւորուել է իսաունածինների հոծ բանակ, որոնք աղջիկ տոկոս ունեն:

Այսպիսով, վերոնշեալ փաստերի զուգադրման արդինքում ի յայտ են գալիս թրքական «գիտական» շրջանակների եւ քարոզչամեքենայի արդէն աւանդական դարձած զեղծարգարութեան՝ պարզունակութեան հասնող թուրքութիւնը եւ անտրամաբանական լինելը: Փաստերը նաեւ յստակ ցոյց են տալիս, որ օսմանեան ղեկավարութիւնը եւ հասարակութեան լայն շերտերը, Հայոց Յեղասպանութեան տարիներին բռնի իսլամացնելով՝ հայ որբ երեխաներին, շարունակել են ոչ մուսուլման ազգերի ձուլման քաղաքականութիւնը եւ դրանով էլ աւելի խճճել իրենց առանց այդ էլ խառնիճաղանձ էթնիք նկարագիրը:

## ՌՈՒԲԷՆ ՄԵՔՈՆԵԱՆ

## Հայ ժողովոյի Օհրական կորուստները Հայոց Ցեղասպանութեան ժամանակ

**Մարդկային կեանքը գերագոյն եւ բացառիկ արծէք է:** Այն անգին է: Բնականաբար, խօսելով Հայոց Ցեղասպանութեան մասին՝ մենք առաջին հերթին եւ գրեթէ բացառապէս շեշտել ենք Հայ ժողովրդի մարդկային կոռուստները: Սակայն, Ցեղասպանութեան տարիներում Հայ ժողովուրդն ունեցել է նաև նիւթական մեծ կորուստներ: Անզին է, որ Ցեղասպանութեան ածանցեալ նպատակներից է եղել Հայ ժողովրդի անհատական եւ Հաւաքական սեփականութեան իւրացումը: Միջագրային իրաւունքը հոչակում է՝ Ex injuria non oritur jus (լատ.), այսինքն՝ յանցագործ չպիտի վայելի իր յանցագործութեան պառողները: Այլ խօսքով՝ erga omnes յանցագործութեան հետեւանքները չեն կարող ճանաչուել կամ օրինականացուել: Այս առումով՝ շատ կարեւոր է յստակացնել, թէ գումարային գրաւորմամբ ինչքան են եղել Հայ ժողովրդի նիւթական կորուստները Հայոց Ցեղասպանութեան տարիներում՝ 1915-1923 թթ.: Քննութեան առնենք որոշ պաշտօնական փաստաթղթեր, որոնցում արձանագրուել են Հայ ժողովրդի նիւթական կորուստները եւ ամրագրուել է նրա փոխհառուցում ստանալու իրաւունքը:

1918 թուի նոյեմբերի 11-ին Առաջին համաշխարհային պատերազմում ուղարկան գործողութիւնները վերջնականացէն դադարեցնող զինադադարը պաշտօնապէս մտաւ ուժի մէջ: Երկու ամիս յետոյ՝ 1919 թուի Յունարի 18-ին, Փարիզում իր աշխատանքներն սկսեց Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը (The Paris peace conference), որի նպատակն էր համապարփակ քննութեան ենթարկել պատերազմին առնչուող բոլոր Հարցերը եւ նախապատրաստել խաղաղութեան պայմանագրերը: Կարեւորագոյն Հարցերի թուին էր պատկանում պատերազմի հրահրման համար մեղաւոր երկրների կողմից նիւթական կորուստների փոխհատուցումը (reparations): Ըստ այդմ՝ Փարիզի վեհաժողովի կազմում կար յատուկ յանձնաժողով՝ փոխհատուցումների Հարցով (The commission on reparations of damage (valuation of damage)): Գրեթէ երկու ամիս տեւած աշխատանքներից յետոյ պարզ դարձաւ, որ նիւթական կորուստներ են ունեցել ոչ միայն պատերազմին անմիջականօրէն մասնակցած երկրները: Ռւսաֆի՝ Մարտի 7-ին նշեալ յանձնաժողովը ձեւաւորեց առանձին մարմին՝ Ցատուկ յանձնախումբ (Special committee), որի նպատակն էր ի մի բերել յանձնաժողովում չներկայացուած երկրների եւ ժողովուրդների նիւթական կորուստները եւ գրանց փոխհատուցմանը տալ պաշտօնական ընթացք (The commission on reparations of damage of the preliminary peace conference has charged a special committee with the gathering together of claims which may be made against the enemy powers):

Ցատուկ յանձնախումբն ունէր հետեւեալ կազմը՝ անդամներ՝ զօր. Մ.Ք.Քինսթրի (McKinstry), ԱՄՆ-ի գնդապետ Փիլլ (Peel), Մեծն Բրիտանիա, պրն. Ժուասետ (Jouasset), Ֆրանսա, քարտուղարներ. Հ. Ջ. Ջ. Ջ. (H. James) ԱՄՆ, պրն. Փ. Լոր (P. Laure), Ֆրանսա: Ցանձնախումբի ձեւաւորման յաջորդ իսկ օրը՝ Մարտի 8-ին, յանձնախումբը դիմեց Պոլիվիայի, Պրազիլիայի, Չինաստանի, Էկուատորի, Կուանտեմալայի, Հայիթի, Հէճագի (ներկայում Մէուտական

Արաբիա), Լիակերիայի, Փանամայի, Փերուի, Սիամի (ներկայում Թայլանտ) եւ Հայաստանի Հանրապետութեան (Delegation of the Armenian Republic of the conference of peace) պատուիրակութիւններին՝ խնդրելով տեղեկութիւններ՝ կրած նիւթական կորուստների վերաբերեալ: Մէկ ամսուայ ընթացքում Ցատուկ յանձնախումբն ամփոփեց պատուիրակութիւնների ներկայացրած, ինչպէս նաև այլ աղբեւրներից Հայթայթած փաստաթղթերը եւ 1919 թուի Ապրիլի 14-ին ներկայացրեց իր նախնական գեկոյցը:

Թէեւ արեւմտահայութեան եւ արեւելահայութեան համար հաշուարկները կատարուել էին առանձին-առանձին, սակայն կորուստները ներկայացուած էին միասնական վերջնական թուով: Ըստ այդմ՝ Հայութեան ամբողջական նիւթական կորուստը 1914-1919 թթ.-ին 1919 թուի գներով կազմել է 19.130.982.000 ֆրանսական ֆրանք կամ 3.693.239.768 ԱՄՆ տոլար: Ըստ զեկուցագրի՝ Հայութեան նիւթական կորուստներն ունէին հետեւեալ պատկերը.

1. Արեւմտահայաստան (կամ ինչպէս փաստաթղթում է գրուած՝ Turkish Armenia).

ա) Գիւղաբնակների անհատական նիւթական կորուստներ՝ 4.601.610.000,

բ) Քաղաքաբնակների անհատական նիւթական կորուստներ՝ 3.235.550.000

գ) Ոչ-անհատական նիւթական կորուստներ՝ 6.761.350.000:

Հնդամէնը՝ 14.598.510.000 ֆրանք

2. Հայաստանի Հանրապետութիւն եւ Կովկասի

**Հայ ժողովրդի դէմ իրականացուած յանցագործութիւնը դեռեւս Թուրքիայի պատախանին է սպասում՝ Ցեղասպանութիւնը պիտի ճամաչուի եւ վնասները պիտի փոխհատուցուեն: Սրանի ուտոպիկան նպատակներ չեն:**

**Որպէս Օսմանեան կայսրութեան իրաւայացորդ՝ բրիտան պետութիւնն ունի միջազգային իրաւական պարտաւորութիւններ:**

**Համաձայն միջազգային իրաւունքի՝ յանցագործութիւնների համար պատախանատուութիւնն ընկնում է դրանի իրականացրած երկրի վրայ, ինչպէս նաև, ըստ շարունակականութեան սկզբունքի, նրա իրաւայացորդի:**

**Ֆետերիքօ Անտրէու-Կուզման, Իրաւաբանների միջազգային յանձնաժողովի փոխ ընդիհանուր բարտուղար**

**Թուրքիայի Հանրապետութեան, որպէս Օսմանեան կայսրութեան  
իրաւայշորդի, փոխհատուցման պարտաւորութիւնը՝ ներկայ  
Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, որպէս Հայաստանի  
Հանրապետութեան իրաւայշորդի, կազմում է առնուազն  
41 միլիոն 514 միլիոն 230 հազար 940 ԱՄՆ տոլար:**

այլ Հայաբնակ տարածքներ

ա) Այն բնակավայրերի բնակչութեան կորուստները, որոնց բնակչութիւնն ամբողջովին տեղահանուել է՝ 1.831.872.000,

բ) Այն բնակավայրերի բնակչութեան կորուստները, որոնց բնակչութիւնը չի տեղահանուել՝ 1.293.600.000,

գ) Այլ նիւթական կորուստներ՝ 1.407.000.000:

Ընդամենը՝ 4.532.472.000 ֆրանք

Համբնդհանուր նիւթական կորուստները՝  
19.130.982.000 ֆրանք:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս թուի մէջ ներառւած չեն Հայերի 1920 թ., 1921 թ. և 1922 թ. (Համապատասխանաբար՝ Արեւելեան Հայաստան, Կիլիկիա, Զմիւռնիա եւայլն) նիւթական կորուստները: Եթէ Հաշւառուեն նաեւ նշեալ ժամանակահատուածի կորուստները, ապա, բնակնաբար, վերնշեալ թիւն առնուազն պէտք է 15-20%-ով մեծացնի: Այստեղ պէտք է նշել, որ Հայաստանի Հանրապետութիւնը երբեք չի հրաժարուել իրեն Հասանելիք հատուցումից (reparation): Անդամ Հայոց պետականութեան կորստից յետոյ, երբ այն ռազմակալուեց օտարերկրեայ զինուած ուժերի կողմից (ոռուսական 11-րդ բանակ + թրքական 3-րդ բանակ), Հայաստանի Հանրապետութեան օրինական ներկայացուցիչները շարունակել են պնդել Հայ ժողովրդի իրաւունքները, մասնաւորապէս՝ նիւթական փոխհատուցումը: Այսպէս՝ Լօզանի պայմանագրի կնքումից (24 Յուլիս 1923 թ.) անմիջապէս յետոյ Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան ղեկավար Աւետիս Ահարոնեանը պաշտօնական գրութեամբ (8 Օգոստոսի 1924 թ.) դիմել է դիմաւոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին եւ վերահսատատել Հայոց իրաւունքներին Հաւատարիմ մնալը: Փոխհատուցումների Հարցով անհրաժեշտ է առանձնացնել մի կարեւոր Հանգամանք՝ ժամանակային գործոնը բնաւ հիմք չէ նիւթական պարտաւորութիւններից խոսսափելու համար:

Ֆինլանտիան ԱՄՆ-ի նկատմամբ Առաջին Համաշխարհային պատերազմից մնացած իր նիւթական պարտաւորութիւնների կատարումն ամբողջացրեց միայն 1969 թուին, Մեծն Բրիտանիան՝ միայն 1965 թուին: Ներկայում Ռուսաստանը գեռեւս ինդիրներ ունի Ցարական Ռուսաստանի նիւթական պարտաւորութիւնների առումով: Թուրքիայի Հանրապետութիւնն ինքը, չնայած ինչոր զիջումներին, Օսմանեան կայսրութեան պարտաքանչ կարողացաւ մարել միայն 1944 թուի Յունիսին: «Նիւ եորք Լայֆ» ապահովագրական ընկերութիւնն (NYLIC) իր 1875-1915-ի շահառուների ժառանգներին փոխհատուցման յանձնառութեան մասին յայտարարեց միայն 2004 թ. Յունուարին, այն էլ երկարատեւ դատավարութիւնից յետոյ: Սոյն դատավարութիւնը թէեւ անմիջականօրէն չի վերաբերում

Հայոց Յեղասպանութեան ընթացքում մէր ընդհանրական նիւթական կորուստների փոխհատուցմանը, այդուհանդերձ լիստ կարեւոր է: Այն վճռով, նմանաբնոյթ գործերի համար, ամրագրեց Հաշուարժէքը, այն է՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի մէկ ֆրանսական ֆրանքը ներկայում հաւասար է 2.17 ԱՄՆ տոլարի, այսինքն՝ դատական նախադէպի կիրառմամբ՝ մենք կարող ենք հաշուարժէլ հայութեան նիւթական չափը Հայոց Յեղասպանութեան հետեւանքով՝ 19.130.982.000 ֆրանսական ֆրանք x 2.17 = 41.514.230 ամերիկեան տոլար: Այսպիսով՝ Թուրքիայի Հանրապետութեան, որպէս Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդի, փոխհատուցման պարտաւորութիւնը՝ ներկայ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, որպէս Հայաստանի Հանրապետութեան իրաւայաջորդի, կազմում է առնուազն 41 միլիոն 514 միլիոն 230 հազար 940 ԱՄՆ տոլար:

**ԱՐԱ ՊԱՊԵԱՆ  
Գանատպայում Հայաստանի նախկին դեսպան**

Աղբիւրներ

Federico Andreu-Guzman, senior legal advisor, International commission of jurists (Geneva), Preface, p. 9. In - Alfred de Zayas, The genocide against the armenians 1915-1923 and the relevance of the 1948 convention, Brussels-Geneva, 2005. Ian Brownlie, Principles of public international law, Oxford university press, fifth edition, 2001, glossary. Միջազգային իրաւունքի մէջ erga omnes (ամրող համաշխարհային Հանրութեան դէմ) յանցագործութիւններ են Համարուում յուսուցիչների ունակարութիւնները: Միանշանակ է, որ ցեղասպանութիւնը յուսուցիչը ունակարութիւնները յանցագործութիւնները: Միանշանակ է, որ ցեղասպանութիւնը յուսուցիչը ունակարութիւնները ոչ միայն հայութեան, այլեւ ողջ Համաշխարհային Հանրութեան առջեւ համար:

Alfred de Zayas, The Genocide against the armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide convention, Brussels-Geneva, 2005, p. 11. Յատուկ յանձնախմբի աշխանքների մանրամասների համար տե՛ս Philip Mason Burett, Reparation at the Paris peace conference, from the standpoint of the american delegation, volume II, New York, 1965, pp. 583-589. Philip Mason Burett, Reparation at the Paris peace conference, from the standpoint of the american delegation, volume II, New York, 1965, pp. 585. 1919թ.-ի Ապրիլի 14-ի գրութեամբ՝ 5,18 ֆրանսական ֆրանքը հաւասար է եղել 1 ԱՄՆ տոլարի: (19.130.982.000 Fr. : 5,18 = 3.693.239.768 US \$) Պաշտօնական գրութեան անգլերէն թարգմանութիւնը տպագրուել է «Նիւ եորք Լայֆ» օրաթերթում 1923 թուի Մեստեմբերի 12-ին. Armenia denounces Lausanne treaty, note to the powers formally reserves all grants under the Treaty of Sevres, The New York times, september 12, 1923, p. 30. Martin Gilbert, A history of the twentieth century, 1900-1933, vol. I, Toronto, 1997, p. 551.

## Ապրեցանք ու ախտի ապրի՞նք

**Մինչեւ 1965՝ 24 Ապրիլը սուգի օր մըն էր միայն, ու կը ծառայէր վերյիշելու մեր նահատակները, սգատօն ու հոգեհանգիստ կազմակերպելու: Կորուստները անմիջական էին, իւրաքանչիւր ընտանիք կը սգար սեփական հարազատները, որոնք կը յիշուէին տակաւին եւ որոնց հետ իսկական կապ գոյութիւն ունեցած էր:**

**Մեծ եղեննի յիմնամեակը դարձաւ առաջին անկիւնադարձը: Սուգի օրը վերածուեցաւ պահանջամատիրութեան օրուան, նաեւ պահանջատիրութեան: Այժմ գուցէ գժուար է ըսել ազգանշանը Հայրենի՞քը տուաւ («Մեր հողերը, մեր հողերը» իր անլուելի կանչով) թէ Սփիւրքը, թէ լուռ համաձայնութեամբ՝ միասի՞ն ձայն բարձրացուցին:**

**1965-էն այսօր պահանջամատիրութիւնը ամրակայուեցաւ՝ դարձաւ համազգային կեցուածք ու գործ՝ ոչ թէ տարին մէկ օրուան 24 ժամերով սահմանափակուած, այլ տեւական բնոյթով, կազմակերպուած ձեւով, Հայ Դատի նույիրուած գրասենեակներով, գասընթացքներով, լսարաններով, ուսումնասիրութիւններով ու հրատարակութիւններով, եւ միջազգային քաղաքական յարաբերութիւններով:**

**Անձնական սուգը, ցաւը մեղմացաւ հետզհետէ, մասնաւանդ վերապրողներու նուազումով - 1915-ին եւ անկէ առաջ ծնածները այսօր արդէն 90-էն 100-ի միջեւ կը գտնուին, եթէ տակաւին մեզի հետ են -, փոխարէնը հաւաքական կորուստը, ցաւը դրսեւորուեցաւ աւելի յստակ կերպով, ստացաւ քաղաքական հանգամանք:**

**Աղէտի թուականէն մինչեւ յիսունամեակ երկու սերունդ ապրեցաւ, վէրքերը սպիացուց, կորուստին զգացողութիւնը փոխանցեց յաջորդներուն:**

**Յինամեակէն հարիւրամեակ՝ ահա արդէն երկու սերունդ եւս պիտի ըլլայ, որ կ'ապրի ու կը շարունակէ, աւելի ու աւելի ուժգին՝ պահանջատէր ներկայանալ աշխարհի առջեւ:**

**Սա՝ մեր մեծագոյն յաղթանակն է, որ դահճին մտքէն իսկ չէր անցներ, քանի որ իր նպատակն էր այնպէս ոչնչացնել մեզ, որ ոչ հայկական հարց մնար, ոչ ալ հայուանուն յիշուէր:**

**Այո՛, թշնամին կրցաւ ահաւոր հարուած հասցնել մեր երթին - մեր թիւր կիսեց, մեր երկիրը մեզմէ պարպեց, մեր նիւթական պատմական ժառանգութիւնը թէ սեփական ստացուածքը իւրացուց, բայց չկրցաւ մեզ ամբողջովին չնշել:**

**Ուստի, վերապրեցանք:**

**Վերապրեցանք յաղթահարելով ամէն դժուարութիւն՝ գործադրելով գերմարդկային ճիգեր:**

**Վերապրեցանք՝ վերանուածելով մեր թիւր, եւ աւելնալով անկէ ալ աւելի:**

**Վերապրեցանք մեր իսկ գործած հրաշքով փրկուած մեր հողին վրայ հայկական պետականութիւն վերահաստատելով՝ հայկական բարձրաւանդակին վրայ մեր անկախութիւնը կորսնցնելէ չուրջ հազարամեակ մը ետք, եւ վերապրեցանք մեր հողէն գուրս՝ նոյնպէս հրաշքի համազօր վճռակամութեամբ:**

**Կոփուեցաւ ազգային գիտակցութիւն, հաստատուեցաւ ազգային նպատակ, կազմուեցաւ ազգային ծրագիր:**

**Եւ ազգովին դարձանք, վերստին դարձանք քաղաքակարթութեան ջահակիր հաւաքականութիւն, պատրաստ՝**



**այդ ուղղութեամբ վերստանձնելու մեր պատմական առաքելութիւնը, ինչպէս եղած էր հազարամեակներէ ի վեր:**

**1915-ին այդ բոլորը տակաւին չէին իրականացած. այդ ճամբուն վրայ էինք, աւելի քան կէս զարու ճանապարհ կտրած էինք, սակայն զարթօնքը գեռ չէր ամբողջացած: Հակառակ Աղէտին՝ յամեցող միջնադարեան մեր իրավիճակն մեծ ոստումով անցանք 20-րդ դարու, եւ հիմա արդէն 21-րդ դարու յառաջադէմ ժողովուրդներու շարքին:**

**Անմիջապէս որ քիչ թէ շատ խաղաղ պայմաններու մէջ կարողացանք ապրիլ, մեր հողին վրայ թէ ի սփիւռս աշխարհի, գարձեալ ծնանք տաղանդաւոր զաւակներ, եւ՝ «Ամէն տեղ կամուրջ ու կամար կապել, Շինել ենք չէնքեր, ամրոց ու պալատ, Ամէն տեղ հերկել, հասցըել բերքեր, Ամէնին տուել միտք, առած, երգեր»: (Պարոյր Անւակ)**

**Այո՛, այդ բոլորը, եւ աւելին տուինք ու կը շարունակենք տալ մարդկութեան, արուեստներու, գիտութիւններու եւ կեանքի բոլոր մարգերուն մէջ համաշխարհային համբաւի հասնող անուններով:**

**Այսօր բոլոր ժամանակներէ աւելի ուսեալ են հայերը, անհատապէս՝ իրենց ասպարէզներուն մէջ յաջողած, ինքնաբաւ, իսկ հաւաքաբար՝ կազմակերպ ու հսկայ կարողականութեան տէր:**

**Ստորակայութեան բարդոյթը, պարտութեան ամօթրթօթափած, բարձրածակատ կը ներկայանանք աշխարհի առջեւ: Մեր թերութիւններուն գիտակից, մեր ակարութիւնները ընդունելով, տակաւին զարգացման մեր առջեւ ձգուող երկար ճանապարհը տեսնելով, բայց եւ այնպէս հպարտ:**


**Եւ միշտ պահանջատէր:**  
**Դէպի 2015 մնացած մի քանի տարիները պէտք է մեզ առաջնորդեն դէպի նոր անկիւնադարձ, որ պիտի իմաստաւորուի մեր հայրենիքին շուրջ համախմբումով, մեր պետականութեան ժողովրդավարութեան զարգացումով, անտեսութեան ամրակայումով, սահմաններու ամրապնդումով ու ընդարձակումով:**

**Այլ խօսքով ամբողջական հայութեան եւ ամբողջական Հայաստանի տեսլականի համազգային հետապնդումով:**

**Ապրիլ 24-ը պիտի նշենք այլեւս մեր ապրելու վճռակամութեան մնայուն Վերանորոգման օր:**

**ՎՐԵԺ-ԱՐՄԵՆ**

## Հայկական Ցեղասպանութիւնը եւ հայ կիւներու առեւանգումն ու իսլամացումը



Խայտուն, 17 տարեկան  
Nubarian library collection, Paris.



Մարի Պիսինիւն, 20 տարեկան  
Nubarian library collection, Paris.



Քենցի Վիքրորիա Տէլիքշիւն, 18 տարեկան.

Նկարները կը ներկայացնեն իսլամացման ենթարկուած հայուհիներ։ Նուպարեան գրադարանի արխիվ, Փարիզ

**Հայկական Ցեղասպանութեան իրագործման իր քաղաքականութեան մէջ Օսմանեան կայսրութիւնը որդերգեց իւրայատուկ քաղաքանութիւն մը։ Այսպէս, ոռաջին հերթին ոչնչացնելէ ետք հայ բնակչութեան արական խաւը դիմեց յաջորդ հանգրուանին՝ մնացեալ բնակչութեան տեղահանում եւ աքսորում դէպի Սուրբիոյ անապատները։ «Մաւան քայլարշաւ»ին մաս կազմող տեղահանութեան կարաւանները բաղկացած էին ծերունիներէ, մանուկներէ եւ կիներէ։**

Անապատային ճանապարհի ընթացքին հայ կիներ կ'ենթարկուէին զանազան չարչարանքներու՝ պահելու համար իրենց պատիւը եւ իրենց զաւակները խնայելու տանջանքներէ։ Հայ կիներ կը դիմագրաւէին նաեւ առեւանգումի եւ բռնաբարումի վտանգները, օսմանցի կամ քիւրտ զինուորներու, ինչպէս նաեւ պետեղներու կողմէ, որոնք անիմայ կը սպանէին արգելք հանդիսացող ուեւէ անձ։ Այսպէս, ոմանք ճամբու ընթացքին կը մահանային, իսկ ուրիշներ անձնասպանութեան կը դիմէին իրենց պատիւը պահելու համար։



Իսլամացումէ փրկուած հայուհիներ

**Հայկական Ցեղասպանութեան գաման արդիւնքներէն մէկն էր հազարաւոր հայ կիներու առեւանդումը եւ իսլամացումը:** Ոմանք ընտելանալով իսլամական ընտանիքներու սովորութիւններուն, կորսնցուցին հայկական իրենց պատկանելութիւնը եւ նոյնիսկ կորսնցուցին իրենց մայրենի լեզուն գործածելու կարողութիւնը եւ ամբողջովին ձուլւեցան ու իսլամացան: Ուրիշներ փրկելու համար իրենց եւ հարազատներուն կեանքերը բռնի իսլամացան ամուսնանալով իսլամներու հետ եւ որդեգրելով անոնց տեղական սովորութիւնները, անոնք կը կրէին յատով նշաններ թարուի ձեռով, որոնք նախապէս Միջին Արեւելքի եւ յատկապէս իսլամական երկիրներու մէջ ունէին յատով ուժի մը իմաստը: Այսինքն, այդ շրջանի ժողովուրդները կը հաւատային թէ կէտի մը կամ չ ձեւով գծագրուած այս նշանը կրող կիներ կը վայելէին կախարդական ուժի մը յատով պաշտպանութիւնը: Այս նոր նշանները անոնց տուին նոր պատկանելութիւն եւ կեանքի ամբողջական ընթացքի փոփոխութիւն:

**Համաշխարհային Ա. պատերազմի աւարտէն ետք հայկական կազմակերպութիւնները եւ օտար**

միսիոնարներ աշխատանք տարին վերագտնելու իսլամացած հայ կիներ, ազատելով զանոնք զիրենք առեւանդողներէն: Փրկարար այս աշխատանքը ունեցաւ հսկայական գործողութեան մը տարողութիւնը եւ դիմագրաւեց լուրջ վտանգներ: Այս միսիոնարներէն ամենէն յատկանշականը կարելի է համարել դանիացի միսիոնար Քարէն Եփիէ, որ մինչեւ 1928 թուական մեծ աշխատանք տարաւ արաբ ցեղապետներու օժանդակութեամբ եւ ան կրցաւ վերագտնել եւ իսլամութենէ ազատել չուրջ 2000 հայ կիներ եւ մանուկներ: Ան նաեւ զանազան շրջաններու մէջ յատով պատսպարան տուններու կառուցման ձեռնարկեց հայ կիներու եւ մանուկներու տանջանքներուն վերջ տալու համար:

**Փրկարար այս աշխատանքներուն իրենց մասնակցութիւնը բերին բազմաթիւ կամաւորներ, որոնք նոյնիսկ իրենց կեանքերը զոհեցին այս նպատակին համար:**

20-րդ դարու սկիզբը տեղի ունեցած Հայկական Ցեղասպանութեան ցաւալի իրողութիւններէն մէկն է հայ կիներու եւ մանուկներու առեւանդումը եւ հետագային կատարուած փրկարար աշխատանքները:



Մելէք. 17 տարեկան.  
Nubarian library collection, Paris.



Այնթապցի Լ. Պիլանեան  
17 տարեկան,  
Nubarian library collection, Paris.



Եկահշէհիրցի Սուլթան,  
14 տարեկան,  
Nubarian library collection, Paris.



Որֆացի Աստղիկ,  
16 տարեկան,  
Nubarian library collection, Paris.

## ՀայութիԱերու պղծումը

«Մութը կ՚իջնէ: կը ջանանք քնանալ՝ վաղուան տաժանքին համար ուժ հաւաքելու անձկութեամբ, բայց անկարելի կ՚ըլլայ: կը խեղդուինք տաքէն եւ մեր բոլոր ոսկորներն ու գնդերները կը ցաւին:

Կէս գիշերէն առաջ, ոստիկանները ներս կու գան, կը փակեն դուռները ու ճրագներով կը մտնեն մեր մէջ: կը զատեն ութ գեղանի աղջիկ՝ իրենց հետ տանելու համար:

Աղաչանք, բողոք, կոիւ, պաղատանք, օգուտ չեն ըներ: - Հարս է, երկու զաւկի տէր, - կը պարատի կին մը՝ իր աղջիկը փրկելու համար:

Առեւանգիչը այնպիսի՝ տգեղ պատասխան մը կու տայ, որ կիները կը բռնեն իրենց ականջները ու գլուխնին կը պահն իրենց ափերուն մէջ:

Առտուն, անոնցմէ հինգը ետ կը բերեն, յոդնած, շարդուած, տառապած, արցունքէն կարմրած ու ամօթէն ընկնուած ուսերով:

Ու զարմանալի բան. այն մայրերը, որոնց աղջիկները ետ չէին բերուած, աւելի բախտաւոր կը համարուէին, քան անոնք, որոնց զաւակները ետ եկան գիշերուան մը ակամայ բացակայութենէ ետք: Կարծես ա՛լ անոնք ամօթի, պղծութեան ու մշտնջենական պժգանքի դատապարտուած



Գարուն, 1915, գործ՝ Տիգրան Թոքմաճեանի

անօթներ էին, որոնց ոչ ոք կ՚ուզէր հպիլ, մա՛նաւանդ՝ տէր ելլել, բայցի իրենց մայրերէն:

- Մէջքս չորնար՝ չծնէի քեզ, - իմ անբախտ զաւակս, - կը հեծեծէր մէկը, իր տանջուած աղջկան գլուխը գրկին մէջ պահած, - մէջքս չորնար, չծնէի քեզ...»:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

«Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ»

## ԱՄՆ դեսպան Մորկընթառի վկայութիւներէն

«(...) Մայիս 10-ին 30-ի միջեւ ամենէն ականաւոր 1200 հայերը եւ այլ քրիստոնեաներ առանց դաւանանքի խսրութեան ձերբակալուեցան Տիգրապեքիրի եւ Մամուրէթ ուլ Ազիզի վիլայէթներուն մէջ:

Կ՚ըսեն, թէ Մուսուլ պիտի տարուէին, սակայն ուրիշ ոչինչ լսուեցաւ անոնց մասին:

Մայիս 30-ին 674 ձերբակալուածներ Տիգրիսի վրայ լեցուեցան 13 մակոյկներու մէջ, այն պիտակին տակ, թէ Մուսուլ պիտի փոխազրուէին: Վալիին գործակատարը 50 ոստիկաններու օգնութեամբ կը գլխաւորէր շարասիւնը: Ոստիկաններուն կէսը յարձակեցաւ մակոյկներուն վրայ, իսկ մնացեալը ձին քշեց գետափին: Կարծ ժամանակ ետք գերիներուն ամբողջ դրամը (չուրջ 6000 թրքական սթերլին) կողոպառած էր, ապա զանոնք մերկացուցին եւ վերջը գետնետեցին: Գետափին երթեւելող ոստիկաններուն հրահանդւած էր թոյլ չտալ, որ ուեէ մէկը փախչէր: Զոհերուն հագուստները ծախուեցան Տիգրապեքիրի շուկային մէջ:

Գրեթէ նոյն ատեն 700 երիտասարդ հայեր զինուորագրուեցան, ապա ուղարկուեցան կառուցելու Քարապաղչ - Հապաշի ճամբան: Այս 700 այրերուն մասին եւս լուր չկայ:

Կ՚ըսեն, թէ օր մը Տիգրապեքիրի մէջ 5 կամ 6 քաշանայ մերկացուցեր են, կուլպով մրուտեր են եւ քարշ տուած են փողոցներուն մէջ:

Զանոնք կարաւաններով դէպի անապատը քշած էն, հոն բնակեցնելու պատճառաբանութեամբ: Թէ Արմէն գիւղին մօտ (Պաղտատի երկաթուղիին գիծին վրայ, Մուսուլի մօտ) եւ դրացի գիւղերուն մէջ չուրջ 5000 հոգի սպանուեցաւ. միայն քանի մը կիներ եւ մանուկներ փրկուեցան: Մարդիկ ողջ-ողջ հրուեցան հորերու կամ կրա-

կի մէջ: Այնպէս կը ձեւացնեն, թէ հայերը պիտի օգտագործեն գաղութատիրութիւն հաստատելու համար Պաղտատի երկաթուղիին 24 քմ. կամ 30 քմ. հեռու գտնուող շըջաններու մէջ: Սակայն, որովհետեւ միայն կիներն ու մանուկները կ՚ուղարկուէին աքսորի, եւ որովհետեւ բոլոր այրերը, բացի շատ ծերերէն, պատերազմի գացած են, ասիկա նուազ ոչինչ կը նշանակէ, քան ընտանիքներու հաւաքական սպանողը, որովհետեւ անոնք ո՛չ աշխատող ուժը ունին, ոչ ալ դրամագլուխը, հողամասը մաքրելու համար:

Ամբողջ մէկ ամիս, զրեթէ ամէն օր, Եփրատէն վար ծփացող դիակներ կը տեսնուէին. յաճախ՝ իրարու կապուած 2-էն 6 դիակներու խումբեր: Այրերուն դիակները մէծ մասսամբ սոսկալի կերպով անդամահատուած են (սեռային գործարաններ հատուած են եւայլն), կիներուն դիակները պատուած եւ երկուքի բաժնուած են: Եփրատի վրայ հսկող թրքական զինուորական իշխանութիւնը՝ ձարապլուսի գայմագամը կը մերժէ արտօնել այս դիակներուն թաղումը, պատճառաբանելով, որ երբեք չի կրնար փաստել, թէ անոնք իսլամներո՞ւ թէ քրիստոնեաներու կը պատկանին: Ան կ՚աւելցնէ, թէ ոչ ոք որեւէ հրաման տուած է իրեն այս ուղղութեամբ: Գետափին իրած դիակները կուլ կ՚երթան չուներու եւ անգերերու: Բազմաթիւ գերմանացի ականատեսներ կրնան վկայել այս իրողութիւնը: Պաղտատի երկաթուղիին պաշտօնեաներէն մէկուն բերած տեղեկութեան համաձայն, Պիրեծիքի բանտերը կանոնաւոր կերպով կը լեցուին ամէն առաւօտ եւ ամէն գիշեր կը պարպուին Եփրատի մէջ: Տիգրապեքիրի եւ Ուրֆայի միջեւ գերմանական հետեւակներու հրամանատար մը անհամար անթաղ մեռելներ տեսած է ճամբուն երկայնքին(...):»:

## ԼՐԵԱԼ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՈՂՋ-ՈՂՋ ԹԱՂՈՒՄԸ

Ուամազանի վերջի օրերն էր, յանկարծ իշեւանին մէջ տարածայնութիւն ելաւ, Միւֆէթիշ կէլիօր - Քննիչ կու գայ...: Տեսակ մը իրարանցում, ժանտարմաները տենդոտ գործունէութեան մէջ են: Կարաւանին մէջ աչքի ինկող էրիկմարդ, երիտասարդ ժողվեցին, ծառերէն ճիւղեր կտրել տուին. աւել շինեցին, իշեւանին ճամբաները, անցքերը աւելի կու տան, աղբերը մէկ կողմ կը ժողվեն, կը մաքրեն: Ուրիշ խումբի մը թի-փետատ տալով՝ փորել կու տան ընդարձակ փոս մը, մինչ ուրիշ խումբի մը մարդիկ ալ գիշակները կը ժողվեն, ոտքերէն չուան ձգած, քաշելով բացւած փոսը կը տանին կը ձգեն: Ի վերջոյ ժանտարմաները՝ բերել նոյն այդ փոսը լեցնել տուին քիչ առաջ մեր այցելած Զօնուգլար-Պաղչէսիի լքեալ մանուկները:

Սի՞րտ կը դիմանար, որ հանդիսատես ըլլայի այլեւս. ներկայ գտնուողներէն քեռուս տղան Պօղոսը եւ ուրիշներ եկան պատմեցին. խեղճ տղաները, իրենք ալ զգաւով որ զիրենք ողջ-ողջ պիտի թաղեն, ահ ու սարսափով այնպիսի ճիշ-ճըղուընուոց մը, լաց ու վայնասուն մը կը բրցունեն որ, երկինք-գետինք կարծես կը գողար: Երկու վայրկեանի մէջ ամէն կողմէ թիերով հողը վրայ կու տան, կը ծածկեն փոսը, կենդանի կը թաղեն մանուկները:

Եկող Միւֆէթիշը ըսին, Մալաթիացի Գոմիսէր իսմայիլ պէկ, Ֆըրընճըլար հասնող կարաւաններուն քըն-նիչ, փոխադրութիւնները վարող, եւ կարաւաններուն ընկերանալով՝ Զէյնալի Սարը Գանլը-Տէրէի սպանդներուն հսկողի, կազմակերպողի պաշտօնը ունի եղեր:

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆ  
«Եղենապատում»



## Ա. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԻ ԿԱՐԱԻԱՆԸ

Ամերիկեան վարժարանի աշակերտուհի՝ Հայկանուշ Զառացեանի պատմածներէն.

«Երբ որ մեր կարաւանը Հասան - Զէլէպի հասաւ, բոլոր էրիկմարդիկը, մինչեւ 10 տարեկան տղաքը ժողվեցին տարին: Վերջէն լուր եկաւ թէ՝ մարդ գլուխ 5 սոկի տուողը թող պիտի տան. չտուողները պիտի սպանեն: Շատ կնիկներ ունեցած-չունեցած դրամ, ոսկի, առին տարին, շատերը կրցին իրենց մարդիկը ազատել: Շատեր ալ դրամ չունէին, եւ շատ մարդ վար դրին: Ասոնց կնիկները կ'աղաղակէին, կը պատատէին որ իրենց մարդիկը թող տրուին. կենդանակերպ քիւրտեր, դաժան-դաշիճ ժանտարմաներ թուրերնածախներ ձեռքերնին շրջապատած էին մեր մարդիկը: Տեսնելով որ ասոնցմէ դրամ կարենալ առնելու յոյս չկայ, շատ մը ձիու պայտեր, գամեր բերին, ասոնց ոտքերը սկսան պայտել. ձեռքերնին հաւատամք բռնել տուած՝ իրար կը գամէին:

«Անպատմելի էր մէկ կողմանէ զոհերուն աղիողդ ճիշերը, աղաղակները, միւս կողմանէ կնիկներուն լաց ու կոծը, վայնասունը: Արիւնը ոտքերնուն, ձեռքերնուն աղբիւրի պէս կը վազէր. մինչեւ եղկելիները ասանկ կը տանջուէին, անգութ դահիճները կ'ըսէին անոնց. «Ի՞նչ

կայ համբերեցէք, չէ՞ որ ձեր Քրիստոսն ալ ասանկ ձեռքերէն, ոտքերէն գամեցին, անիկա բնաւ չէր տրտնչար»:

«Վերջէն մեծ քանակութեամբ չոր խոտ բերին, թիթեղ մըն ալ կազ. խոտը աս խեղճերուն բոլորափը գիշեցին, կազը վրան լեցուցին, կրակ տուին բռնկեցուցին: Կնիկներն ալ շրջանակածեւ բոլորափը կեցուցին. կանաչ-կարմիր բոցերը կը լափէին կալանաւորները, կնիկները խելագարած, ոմանք ինքինքնին պատառ-բզիկ կ'ընէին, ոմանք գլխնուն, կուրծքերնուն կը ծեծէին, ոմանք մարած, ուշքերնին անցած կ'իյնային. շատեր ալ ձեռքերով-նին երեսնին կը ծածկէին որ չտեսնեն այս ահոելի տեսարանը, որ ճշմարիտ գժուխք մըն էր:

«Դահիճները մէյ մէկ սաղայէլներ, կը բռնադատեն կնիկները որ երեսնին չծածկեն, նային. ի՞նչ զուարճալի բան է ըսելով՝ դժոխքին բոլորափը պար բռնած, գիւային ուրախութեամբ կը զուարճանային: Մառախի պէս մլուլ-մլուլ կը վառէին մարդիկը, ճենճահոտը աշխարհք բռնած էր. ամէնքը այրեցան, մոխիր եղան»:

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆ  
«Եղենապատում»

## Եղեռնը հակահայ քաղաքականութեան հետեւանքն էր ՀԵՏԻԱԲԱՐ՝ ՄԻԱՅՆ 1915-ՈՎ ԶԻ ՍԱՀՄԱՆՈՒԻՐ

**Կայսրութիւն:** Բառը արդէն ժխտականութիւն մը կը յուշէ: Կայսրութիւնը իր սահմանումովն իսկ կը նշանակէ, թէ կայ մեծ ուժ մը որ բռնագրաւած կը պահէ իրմէտ տկարներու հայրենիքները: Եւ «բռնագրաւած պահելու» այս հասկացութիւնը կ'ենթագրէ նաեւ, ամէն բանէ առաջ, բռնի ուժի գործածութիւն՝ իր անիտուսափելի հակագդեցութիւններով: Եւ որովհետեւ քաղաքական մտածողութեան մէջ կայ տեսութիւն մը, ըստ որուն երբ ուժը ինքնանպատակ է, կ'ուղղուի դէպի ինքնաքանդում, հետեւաբար, ուժի «տէրերը» պէտք է աշխատին նորոդել իրենց ուժի աղքիւրները, տնտեսապէս, քաղաքական, գինուրական թէ այլ միջոցներով, որպէսզի կարենան երկարաձգել իրենց իշխանութիւնը:

Եւ ուրեմն, «ինքնանորոգումի» այս գասական օրինակներէն մէկն ալ Օսմանեան կայսրութեան պարագան էր, յատկապէս 19-րդ դարուն, երբ 1836-ին եւ 1856-ին, իրարայաջորդ երկու սուլթաններ, Ազարիկ Մէծիոն եւ Ազարիկ Ազիզ, փորձեցին արդիականացնել օսմանեան պետական կառոյցները՝ կայսերական հրամանագրեր արձակելով, որոնք պատմութեան մէջ ծանօթ են իրեւ Հաթթը Հիւմայուն եւ Հաթթը Շերիֆ: Այս երկու կարեւոր քայլերը, որոնցմէ մէկուն յաջորդեցին եւ միւսին նախորդեցին 1848-ի եւրոպական յեղափոխական շարժումները, ստեղծեցին նաեւ այն ենթաչողը, մթնոլորտը, որ մեծապէս նպաստեց մեր Զարթօնքի շարժումին եւ հետեւաբար նաեւ՝ Ազգային սահմանադրութեան, 1863-ին:

Այս ժամանակաշրջանի օսմանեան երկու վարչապետները, Ալի եւ Ֆուտա փաշաները ամէն ճիգ թափեցին, որպէսզի պոլսահայ համայնքի ղեկավարութեան կողմէ մշակուած եւ առաջադրուած Ազգային սահմանադրութիւն կոչուած փաստաթուղթը միայն նուազագոյն կապը ունենայ գաւառին հետ, ուր սակայն կ'ապրէր կայսրութեան հայ բնակչութեան ջախչախիչ մեծամասնութիւնը:

Ճիշդ է, որ կայսրութիւնը ինքզինք նորոգելու, իր կառոյցները արդիականացնելու ճիգի մը մէջ էր, սակայն վերջին հաշուով՝ կայսրութիւնը, մէնատիրական վարչակարգով: Ալ ի՞նչ սահմանադրութիւն, ի՞նչ հիմնական օրէնք: Եւ ուրեմն, այն, ինչ որ Հայկական իրականութեան մէջ ծանօթ է իրեւ Ազգային սահմանադրութիւն Հայոց, օսմանեան կառավարութեան կողմէ ճանչցուած էր սոսկ իրեւ «Քանունամէտ էրմէնի միլլէթի»: Այսինքն, հայ համայնքի (միլլէթի) կանոնագիրը: Պետականական սոսումով, հակայական, լեռ-ձոր տարբերութիւն կայ «սահմանադրութիւն» եւ «կանոնագիր» բառերուն միշեւ: Պետութիւններն են, որոնք սահմանադրութիւնը կ'ունենան. Հայաստանի Հանրապետութիւնը, օրինակի համար, ունի սահմանադրութիւն, իսկ անոր սահմաներէն ներս գործող տուեալ կազմակերպութիւն մը, ըսենք՝ Հայ օգնութեան միութիւնը՝ պարզապէս կանոնագիր: Եւ ուրեմն, ինչ որ մենք կը կոչէինք Ազգային սահմանադրութիւն, օսմանեան պետութեան համար «կանոնագիր» էր, ուրիշ ոչինչ (Հապահունչ, կը կարծէինք որ բռնատիրական վարչակարգի մը տակ ապրող համայնք մը իրաւասութիւն կրնա՞յ ստանալ «սահմանադրութիւն» ունենալու, երբ օսմանեան պետութիւնը ի՞նք սահմանադրութիւն չունէր եւ սուլթանները կը

սարսափէին այդ գաղափարէն իսկ):

1860-ական թուականներու օսմանեան պետական աւագանիին համար, շատ հաճելի չէր առնչուիլ «սահմանադրութիւն» ունենալ ձգտող խմբաւորումի մը հետ: Հապահութէ կայսրութեան միւս տարրերը եւս ուզէին օրինակ առնել հայերէն, հապահութէ վարչակարգի ներքին ընդդիմագիրները եւս ուզէին նման բան մը պարտագել սուլթանին:

Ահաւասիկ, իր վերջին օրերը կ'ապրի Օսմանեան կայսրութեան 54 տարեկան վարչապետ, եւրոպական առումով ուսեալ-զարգացած Քէչէնիզատէ Ֆուտա կայսրութեան ժամանակական գիմնական դերակատարներէն մին: Ան իր մահուան անկողինէն սուլթանին կը յղէ իր քաղաքական կտակը, որուն մէջ կ'ընդգծէ.- Պալքաններու մէջ մենք (թուրքերս) մեր գիրկը իմեր մեծցուցինք, որոնք այսօր կը պատրաստուին մեզ խայթելու, նոյն սխալը պէտք չէ գործենք Փոքր Ասիոյ մէջ, ուր յատկապէս հայերը, վերջերս մեծ եռանդ կը ցուցաբերեն թափանցելու մեր պետական հիմնարկներէն ներս: Պէտք է ԶԱՓԱՀՈՐԵԼ ՀԱՅԵՐՈՒ ԵՌԱՅՈՒԱՆ ԴՐԱՆ:

Հայ քաղաքական միտքի պատմութեան մէջ Ազգային սահմանադրութիւնը իւրայատուկ տեղ մը կը գրաւէ: Միաժամանակ, օսմանեան պետութեան հոգեվարքի մէջ գտնուող սատրազամը (այդպէս կը կոչուէին կայսրութեան վարչապետները) լաւ գիտէր, թէ կայսրութեան համար «ասոր վերջը լաւ պիտի չըլլայ»: Միւս կողմէ սակայն, իր շարք մը այլ գործակիցներու մտքերը հանգիստ էին, այնքան ատեն, որ այդ Ազգային սահմանադրութիւնը (քանունամէն) վաւերացուած էր այնպիսի բովանդակութեամբ, որ հայկական գաւառները կարելի եղածին չափ մեկուսացւած մնային Պոլիսէն: Եղածը, թրքական պետութեան համար, պարզապէս պատրիարքական հաստատութիւնը ներքին կանոնագրով մը օժտելն էր եւ ոչ աւելին. այն պատրիարքարանը, որ 16-րդ դարու կիսուն հաստատուած էր սուլթան Մեհմէտ Ֆաթիհի կողմէ՝ պատրիարք տիտղոսով կրօնապետի մը կողմէ կայսրութեան հայ բնակչութիւնը կառավարելի գարձնելու եւ իրեւ այդպիսին պահելու նպատակով: Թրքական պետութեան այս վարչական պետութեան այս վարչագիրի ծիրակին լոյսին տակ պէտք է դիտել Մկրտիչ Խորինեան հայութիւն պատրիարքական աթոռէն հեռացուիլը, որովհետեւ Պոլիս, պատրիարքական աթոռին նստած, իր ելոյթներով ու բողոքագիրներով, ան անդադար կը հնչեցնէր Գաւառին ձայնը: Իսկ պետութիւնը այդ ձայնը լսել իսկ չէր ուզէր:

ՊԵՐԼԻՆԸ ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻՆ

Սան Միեփանոյի եւ Պերլինի գաշնագիրներու ստորագրումին (1878) նախորդած էին կարեւոր զարգացումներ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք Պոլսոյ մէջ: Հայոց Ազգային սահմանադրութիւնը, շնորհիւ Միտհաթ փաշայի ու անոր հայ գործակից Գրիգոր Օտեանի, գործած էր իր «աւերը»՝ կայսերական մակարդակի վրայ եւ նոր գահ բարձրացած սուլթանը, Համիտ Բ., ստիպուած, որդեգրած էր օսմանեան պետական սահմանադրութիւնը մը, 1876-ին:



Վանայ լիճի մօտ քանդուած հայկական եկեղեցի

**Այս սահմանադրական մեղրալուսինը երկար չտեսեց:** Համիտ Բ. զանազան պատրուակներով առկախեց զայն ու անոր զոյլ հեղինակները, լեղապատառ, իրենց շունչը առին եւրոպա եւ Եգիպտոս (\*):

Նշեալ դաշնագիրներով, Արեւելեան հարցին մէջ կը մանէր նոր ազգակ մը, ու կ'արձանագրուէր նոր զարգացում մը: Պերլինի դաշնագրով, սուլթանական կառավարութիւնը յանձնառութեան տակ կը մտնէր՝ «քարենորոգումներ» մտցնելու կայսրութեան «արեւելեան նահանգներուն» մէջ եւ ապահովելու հայերու կեանքն ու ինչքերը. նաեւ, իր առած քարենորոգչական քայլերուն մասին պարբերաբ զեկուցելու մեծ պետութիւններուն, այսինքն, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ (Հիմնականին մէջ ասոնք էին համաշխարհային թատերաբեմի այդ օրերու հսկաները. Գերմանիա աւելի ուշ միացաւ այս խումբին՝ խառնելով բոլորին հաշիւներն ու քարտերը, ինչ որ ի վերջոյ յանդեցաւ Ա. համաշխարհային պատերազմին): Այդ կ'առաջադրէր Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը:

Համիտի հաշուարկը սակայն ուրիշ էր: Ան վստահար կարդացած էր սատրազամ ֆուլատ փաշայի քաղաքական կտակը եւ վճռած էր Փոքր Ասիսոյ մէջ նոր Պուկարիոյ մը ստեղծումին առաջքը առնել: Առ այս, ան վճռած էր պարզապէս ճգմել հայութիւնը, որպէսզի եւրոպական պետութիւններուն ձեռքէն կարենայ խլել այն նոր խաղաքարտը, որ կը կոչուէր Հայկական հարց: Համիտի տրամաբանութեամբ, որ հետապային կատարելագործուեցաւ երիտասարդ թուրքերու կողմէ՝ երբ չկայ հայութիւն, ալ ի՞նչ բարենորոգում, ի՞նչ Հայկական հարց:

Համիտի հայահալած քաղաքականութեան արդիւնքը եղաւ հայկական յեղափոխութեան ծնունդը, հայկական կուսակցութիւններու ծնունդը (Արմենական, Սոցիալ գեմոլորատ Հնչակեան կուսակցութիւն եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որ սկզբնական շրջանին կը կոչուէր Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն) եւ հետեւաբար նաեւ՝ հայկական ազատագրական շարժումը:

Հիմա այլեւս, պայքարի խրամատները յստակացած եւ դէմ դիմաց փորուած էին: Մէկ կողմէ Համիտի օսմանեան բռնատիրութիւնը, միւս կողմէ հայկական յեղափոխական շարժումը:

Պայքարը եւ երկուստեք մագլցումը անխուսափելի իրականութիւններ էին այլեւս: Մէկ կողմէ հայութիւնը, իր յեղափոխական կուսակցութիւններու ճամբով կը փորձէր ազատագրուէլ թրքական լուծէն, միւս կողմէ օսմանեան պետութիւնը օղակը հետզհետէ աւելի կը սեղմէր հայութեան շուրջ՝ խորքին մէջ ա'լ աւելի թափ տալով յեղափոխութեան:

Համիտի արտաքին քաղաքականութիւնը հիմնուած էր եւրոպական վերոնշեալ ուժերու ներքին հակամարտութիւնները ի նպաստ իրեն շահագործելու սկզբունքին վրայ, զուգահեռաբար փորձելով հայկական պարագակը կարելի եղածին չափ տկարացնել ու ի վերջոյ ճգմել: Հայկական ազգակը կարելի եղածին չափ տկարացնելու համիտեան այս վարքագիծը հիմնուած էր Ֆուատ փաշայի թելագրած քաղաքական մտածողութեան վրայ:

Մինչ այդ, Համիտ կը փորձէր կարելի եղածին չափ ձգձել-քաշքչել հայկական բարենորոգումներու հարցը: Իր այս վարքագիծը յաջողեցաւ մինչեւ 1895, երբ այլեւս ճարահատ, տեղի տալով եւրոպական ճնշումներուն, ան կը ստիպուէր ընդունի բարենորոգումներու մշակուած ծրագիր մը, որ պատմութեան մէջ ծանօթ է իբրեւ Մայիսեան ծրագիր: Եւրոպական այս ճնշումին շարժառիթը հանդիսացան Սասնոյ 1894-ի ապստամբութիւնը, անհաւասար կուիններն ու անոնց յաջորդած ջարդերը: Այս հերոսամարտը լաւագոյն առիթն էր եւրոպական բարեգրին բարեգրին համար, որպէս կը իրենց կարգին բարձրացնէին ճնշումը Համիտի վրայ՝ առաջ մղելով կայսրութեան ներքին գործերուն միջամուխ ըլլալու իրենց երկարամեայ վարքագիծը եւ առ այդ՝ նոր շահեր ապահովել, իւրաքանչիւրը իրեն համար: Այս տրամաբանութեամբ ալ, բնականաբար, Սասնոյ պատրուակ մըն էր եւրոպական մեծ պետութիւններուն համար: Այս-

պէս ինչպէս Սասնոյ ապստամբութենէն շատ առաջ ու բազմաթիւ այլ պարագաներ, ինչպէս Լիբանանի մէջ մարոնի եւ տիւրզի համայնքներու միջեւ զինեալ հակամարտութիւնը (1861), որ յանդեցաւ դարձեալ եւրոպական միջամտութեան:

Սակայն Համիտ ահաւոր անակնկալ մը վերապահած էր թէ՛ հայութեան եւ թէ՛ Հայկական հարցը շահագործող եւրոպական պետութիւններուն համար: Նոյն տարուան, 1895-ի աւարտին, ծայր կու տային ընդհանուր եւ կազմակերպուած ջարդեր, որոնք տեւեցին մինչեւ 1896-ի առաջին ամիսները: Հետեւանքը եղաւ մօտաւորապէս 300,000 անմեղ հայ զո՞հ:

Ի դէպ, որպէսզի աւելի ճիշդ ըմբռնենք Պանք օթոմանի գրաւումը (Օգոստոս 1896) եւ Խանասորի արշաւանքը (Յուլիս 1897), զանոնք պէտք է դիտել ու վերլուծել այս դէպերու եւ հոլովյժներու լոյսին տակ: Արդարեւ, առաջինին պարագային, Դաշնակցութեան պատրաստած ու գեսպանատուներուն բաժնած յայտարարութիւնը կը պահանջէր այս ջարդերուն պատասխանատուներու արդարութեան յանձնուիլը: Երկրորդին պարագային՝ պատմել Վանի ինքնապաշտպանութեան՝ դաշնակցական Պետոյի, հնչակեան Մարտիկի եւ արմենական Աւետիսեանի միացեալ զինեալ խումբերը դաւադրաբար պաշարած եւ զանոնք ընաջնջած Մազրիկ ցեղախումբը, որ գործիք դարձած էր Համիտի վարչակարգին ձեռքը:

Հետագայ տարիներուն, այս մագլցումը յանդեցաւ նոյնինքն սուլթանը մահափորձի ենթարկելու՝ Հ.Յ.Դաշնակցութեան որոշումին, որ դժբախտաբար չյաջողեցաւ՝ հակառակ կազմակերպիչներու ցուցաբերած բացառիկ եւ օրինակելի բժամինդրութեան (այս մասին տեսնել Ցուցական մարմնի տեղեկագիրը, պատրաստուած անոր պատասխանատու Սափոյին կողմէ: «Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար», Դ. Հատոր):

#### ՀՈՒՅ ԵՒ ՎԵՍՏԵՆԵՆԿ

